ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

(Սուրբ Էջմիածին, 6 նոյեմբերի, 2011 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Եպիսկոպոսն խնամ կանի Եկեղեցւոյ, որ է քաղաք Աստուծոյ»:

(Սուրբ Գրիգոր Տաթեւացի)

Սիրելի հավատացյալ զավակներ Մեր,

Ուրախություն է այսօր Մեր հոգում: Գոհաբանությամբ առ Աստված եւ միասնական աղոթքներով կատարեցինք եպիսկոպոսական ձեռնադրության եւ օծման արարողությունը: Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու վեց նվիրյալ սպասավորների արժանացրեցինք եպիսկոպոսի բարձր եւ պատվավոր աստիճանի:

Այսօր մենք ցնծում ենք այս խնդալի իրադարձությամբ: Այսօր երկնքում խնդության մեջ են նաեւ հոգիները մեր երանելի հայրերի, հալածանքների շրջանում չարչարանքների ենթարկված ու նահատակված մեր մարտիրոսյալ հոգեւորականների: Բերկրում ենք, որովհետեւ մեր Սուրբ Եկեղեցին, որ նաեւ Ցեղասպանության եւ խորհրդային եկեղեցամարտության տարիներին կորցրել էր բազում եկեղեցականներ, այսօր զորանում է նոր սպասավորներով՝ եպիսկոպոսաց դասով, ովքեր անձնվեր առաքելության են կոչվում՝ հանուն մեր ժողովրդի հոգեւոր մխիթարության, հայոց ազգային-եկեղեցական անդաստանի պայծառության:

Եպիսկոպոսը աստվածային լիառատ շնորհները փոխանցելու զորությամբ, եկեղեցավարչական առավել եռանդուն գործունեության, Տիրոջ վարդապետությանն անշեղորեն հետեւելու ուխտադրությամբ, առաքելաբար գործելու հանձնառությունն է ստանձնում՝ ի սեր հավատավոր ժողովրդի: Այս իրողության հաստատումով է մեր Սուրբ Եկեղեցու եռամեծար Վարդապետն ասում. «Եպիսկոպոսն խնամ կանի Եկեղեցւոյ, որ է քաղաք Աստուծոյ»: Եպիսկոպոսը հոգածու խնամակալն է Եկեղեցու, «որն Աստծո քաղաքն է», ուր հոգու խաղաղություն եւ աստվածային շնորհներն են բաշխվում հավատացյալներին: Եկե-

ղեցին Աստծո քաղաք է անվանվում, քանզի այստեղ գերակայում են աստվածային օրենքների ու պատվիրանների իրագործումը, տերունապատվեր սիրո, համերաշխության, արդարության ու խաղաղության նախանձախնդրությունն ու ոգին: Եւ Եկեղեցին կազմող հավատացյալները դառնում են նաեւ երկնաքաղաքացիներ՝ ժառանգելով Երկնից Արքայությունն ու հավիտենական կյանքը:

Ձեռնադրության առաքելական հաջորդականությունը այսօր նորաօծ եպիսկոպոսներին հաղորդ է դարձնում անմիջականորեն Տիրոջից շնորհված եւ փոխանցված պարգեւներին Սուրբ Հոգու, հաղորդակից դարձնում նաեւ ոգուն ու նախանձախնդրությանը այն եպիսկոպոսների, ովքեր իրենց կյանքը դրեցին իրենց հավատավոր հոտի համար, ովքեր իրենց գործը լույս դարձրեցին Աստծո փառքի եւ Եկեղեցու պայծառության համար: Սուրբ Պողոս առաքյալի խոսքերով Աստծո տնտեսն է եպիսկոպոսը՝ հավատացյալներին մշտարթուն հորդորողը Տիրոջ լուսառատ վարդապետությամբ (Տիտ. Ա 7, 9): Եպիսկոպոսական ձեռնադրության արարողության խրատը եւս հորդորելով ցուցում է տալիս, թե ինչպիսին պետք է լինի բարձրաստիճան հոգեւորականը. «Եպիսկոպոսը պետք է անարատ լինի, ինչպես Աստծու տնտեսը»:

Սիրելի բարեպաշտ զավակներ Մեր, Տիրոջ կենարար Հարությունից ավելի քան երկու հազար տարիներ անց՝ ներկա ժամանակներում, բազում են խնդիրները, որոնք վերաբերում են ոչ միայն քաղաքական, տնտեսական, մշակութային, այլեւ հոգեւոր ասպարեզին: Մեծ է անհրաժեշտությունը հոգեւոր կյանքի զորացման, Տիրոջ խոսքի առավել քաջեռանդ քարոզչության, ծառայանվեր ու խնամատար գործունեության, բարի ավանդույթներով նոր սերնդի կրթության ու դաստիարակության, մարդկանց կյանքը առ Աստված հավատով ու հույսով վերահմաստավորման: Այսօր, երբ Տիրոջ ողորմությամբ ստվարանում են մեր հոգեւորականաց շարքերը, հոգեւոր կյանքի առաջընթացի համար մեծապես անհրաժեշտ են խոհեմ եւ բանիմաց, քաջեռանդ եւ կորովի եպիսկոպոսներ, ովքեր գլխավորելով Եկեղեցու գործունեության տարբեր ասպարեզները՝ նորանոր հաջողություններ պիտի բերեն հավատավոր մեր ժողովրդին եւ հավելեն փառքը առաքելահաստատ մեր Սուրբ Եկեղեցու: Քրիստոնյա ժողովուրդների դարավոր պատմության էջերում բազում են վկայությունները, որ հոգեւոր վերելքների, ազգային-եկեղեցական կյանքի զարթոնքի առատ արգասիքներ են եղել, երբ իմաստուն եւ նախանձախնդիր եպիսկոպոսների առաջնորդության ներքո հոգեւոր սպասավորների անձնվեր եւ խիզախ ծառայությունները զորացրել են Եկեղեցին, վառ պահել հավատքը, ամուր ու անսասան՝ հավատացյալների աստվածսիրության եւ եկեղեցանվիրումի ոգին: Հավատում ենք, որ նոր ձեռնադրյալ եւ սրբալույս մյուռոնով օծյալ եպիսկոպոսները նույն նախանձախնդրությամբ եւ բեղուն ծառայագործությամբ պիտի իրենց սպասավորությունն իրականացնեն Աստծո փառքի եւ Սուրբ Եկեղեցու պայծառության համար:

Ահավասիկ ձեզ ենք ներկայացնում նորաօծ մեր եպիսկոպոսներին: Տ. Հայ-

կազուն եպիսկոպոս Նաջարյանը երկար տարիներ իր ծառայությունն է բերել ԱՄՆ Հայոց Արեւելյան թեմում, ապա եղել Գեւորգյան Հոգեւոր Ճեմարանի տեսուչ՝ ջանքեր ներդնելով եկեղեցականաց նոր սերնդի պատրաստության գործում: ԱՄՆ Հայոց Արեւելյան թեմի առաջնորդական փոխանորդի պաշտոնից նա կոչվեց ծառայության Կենտրոնական Եւրոպայում եւ այժմ եպիսկոպոսական աստիճան է ստանում՝ որպես Հայրապետական պատվիրակ Կենտրոնական Եւրոպայի: Տ. Վահան եպիսկոպոս Հովհաննիսյանը երկար տարիներ ծառայել է ԱՄՆ Հայոց Արեւելյան թեմում եւ իր աշխույժ ու բազմարդյուն ծառայությամբ շենացրել է իր համայնքը, զորացրել հայորդիների հավատքն ու ազգային գիտակցությունը: Վահան Սրբազանը Անգլիայի Հայոց թեմի առաջնորդն է, ուր շարունակում է իր արգասավոր ծառայությունը՝ զորացնելով թեմը եւ Մեծ Բրիտանիո ու Իռլանդիայի հայորդիների հավատարմությունն ու նվիրումը մեր Սուրբ Եկեղեցուն, սրբազան մեր արժեքներին: Տ. Տաթեւ եպիսկոպոս Հակոբյանը հոգեւոր հովիվն էր Հոլանդիայի: Նա իր ծառայությամբ բարի նպաստ է բերել Հոլանդիայի հայ գաղթօջախի ազգային եւ եկեղեցական կյանքի շինությանն ու առաջընթացին: Տաթեւ Սրբազանն ընտրվել է Ռումինիայի Հայոց թեմի առաջնորդ ու նոր հաջողություններով շարունակում է իր առաջնորդական առաքելությունը: Գեւորգ եպիսկոպոս Սարոյանը եղել է Սեւանի Վազգենյան Դպրանոցի տեսուչը, այժմ Գեւորգյան Հոգեւոր Ճեմարանի տեսուչն է եւ նվիրյալ ծառայությամբ իր եռանդագին ջանքերն է ներդնում մեր Սուրբ Եկեղեցու հոգեւոր-կրթական գործունեության արդյունավետության, նոր եկեղեցականների պատրաստության ու կրթության կարեւոր առաքելության մեջ: Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայանը ձեռնադրությունից ի վեր օգտաշատ սպասավորություն է իրականացնում Մայր Աթոռում եւ ներկայիս նախանձախնդիր ջանքերով իր կարողություններն է ներդնում Մայր Աթոռի վարչատնտեսական գործունեության կազմակերպման ու արդյունավորման համար: Տ. Հովնան եպիսկոպոս Հակոբյանը եղել է Մեր գավազանակիրը եւ որպես գավազանակիր իր ծառայության տարիներին ականատես ենք եղել նրա եկեղեցանվեր ոգուն եւ պատրաստակամ ծառայասիրությանը: Հովնան Սրբազանն այժմ լուսարարապետն է Մայր Աթոռի եւ մեծ նվիրումով իր ջանքերն է բերում եկեղեցական արարողությունների պատշաճ ու հանդիսավոր կազմակերպմանը:

Սիրելի սրբազաններ, վստահ ենք, որ հաստատուն պիտի պահեք ձեր ուխտը եւ տերունապատվեր առաքելությամբ պիտի հավելեք ձեր ազգօգուտ ու եկեղեցանվեր գործերն ու վաստակը նորանոր արարումներով եւ ձեռքբերումներով: Մեր Տիրոջ եւ Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի լույս օրինակով գործեք եւ ծառայեք, «որպեսզի պտղաբեր լինեք Աստծու համար», ըստ սուրբ առաքյալի հորդորի (Հռ. Է 4)՝ միշտ հիշելով, որ եպիսկոպոսը, ինչպես ասում է Սուրբ Գրիգոր Տաթեւացին, խնամատարն է Եկեղեցու, իսկ Եկեղեցին Աստծո քաղաքն է:

Աղոթքով առ Բարձրյալն Աստված մաղթում ենք, որ դուք՝ հանձն առած

փերունապատվեր խաչը, առավել անձնվիրությամբ շարունակեք ձեր բարի ծառայությունը բերել Քրիստոսասեր մեր ժողովրդին, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին: Թող «այնպէս լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի մարդկան, որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս, եւ փառաւորեսցեն զՀայրն ձեր որ յերկինս է» (Մատթ. Ե 16): Բարձրյալի զորակցությունն ու օգնականությունը ձեզ՝ սիրելի սրբազաններ, ի շինություն եւ ի պայծառություն Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու, ի մխիթարություն համայն աշխարհասփյուռ հայության:

«Թող փառավորվի մեր Տեր Հիսուս Քրիստոսի անունը ձեր մեջ, եւ դուք փառավորվեք նրա մեջ՝ մեր Աստծու եւ Տեր Հիսուս Քրիստոսի շնորհի համաձայն. ամեն» (Բ Թեսաղ. Ա 12):

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՆՈՐՎԵԳԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Նոյեմբերի 9-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Նորվեգիայի Արտաքին գործերի նախարար Յոնաս Գահր Շտյորեին:

Զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետը կարեւորեց երկու երկրների միջեւ սերտ հարաբերությունների ձեւավորումը, կրթության եւ մշակույթի ոլորտներում ակտիվ գործակցության զարգացումը: Հայոց Հայրապետը գնահատանքով անդրադարձավ ՀՀ անկախության քսան տարիների ընթացքում Նորվեգիայի կողմից Հայաստանին ցուցաբերած կարեւոր աջակցությանը: Նորին Սրբությունը ներկայացրեց նաեւ Հայ Եկեղեցու գործունեությունը:

Ուրախություն հայտնելով, որ նախարարի այցը տեղի է ունենում նորվեգացի մեծագույն հումանիստ Ֆրիդյոֆ Նանսենի ծննդյան 150-ամյակի հայաստանյան տոնակատարությունների օրերին՝ Նորին Սրբությունը նշեց, որ Ֆ. Նանսենն իր իրականացրած կարեւոր մարդասիրական առաքելությամբ առանձնահատուկ նշանակություն ունի հայ ժողովրդի կյանքում:

Պարոն Յոնաս Շտյորեն, շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար, անդրադարձավ Հայոց Եկեղեցու դերակատարությանը Հայաստանում եւ աշխարհում քրիստոնեական արժեքների պահպանման եւ տարածման գործում:

Հանդիպման ընթացքում նաեւ խոսվեց Նորվեգիայի փոքրաթիվ հայ համայնքի, Հայ Եկեղեցու միջեկեղեցական հարաբերությունների ու միջկրոնական

երկխոսության մեջ ներգրավվածության մասին: Անդրադարձ կատարվեց տարածաշրջանում խաղաղության հաստատմանն ուղղված հոգևոր առաջնորդների գործադրած ջանքերին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՍԹԻՎԵՆ ՎՈԶՆՅԱԿԻՆ

Նոյեմբերի 10-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Apple ընկերության համահիմնադիր Սթիվեն Վոզնյակին՝ ուղեկցությամբ «Սինոփսիս Արմենիա» ընկերության գործադիր տնօրեն Հովիկ Մուսայելյանի եւ ընկերության պաշտոնեության:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորեց պրն. Վոզնյակին՝ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի կողմից ՏՏ ոլորտում համաշխարհային ներդրման համար նրան շնորհված մրցանակի առիթով: Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ այցի ընթացքում պրն. Վոզնյակն առիթ պիտի ունենա ճանաչելու հայ ժողովրդին եւ նրա հոգեւոր ուժի արգասիքներն ու դարերով կերտված արժեքները:

Նորին Սրբությունն իր օրհնությունը բերեց անհատական համակարգչի ստեղծողին՝ մարդկությանը բերած օգտակար ծառայության համար՝ մաղթելով նորանոր ներշնչանքներով առավել մեծ թռիչք հանուն մարդկային կյանքի զարգացման:

Իր հերթին Apple ընկերության համահիմնադիրը շնորհակալություն հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին ընդունելության եւ ջերմ զրույցի համար: Պարոն Վոզնյակը Նորին Սրբությանը ներկայացրեց նաեւ Apple-ի հետագա զարգացման իր տեսիլքը:

Հանդիպմանը անդրադարձ կատարվեց կրոնի եւ գիտության փոխհարաբերություններին, կարեւորվեց, որ ապրվածապարզեւ շնորհները եւ գիտելիքը, գիտության առաջընթացը ծառայեն միմիայն մարդկության բարօրությանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Նոյեմբերի 16-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռումինիա-

յի Արտաքին գործերի նախարար Թեոդոր Բակոնսկիի գլխավորած պատվիրակությանը:

Ողջունելով նախարարի այցը Մայր Աթոռ՝ Նորին Սրբությունը հաջողություն մաղթեց նրա առաքելությանը: Վեհափառ Հայրապետը գոհունակություն հայտնեց, որ երկու երկրների միջև պատմական հարուստ ու ջերմ հարաբերությունները շարունակում են զարգանալ եւ առաջընթաց ապրել: «Ռումինիան շատ հարազատ է մեր հոգուն ոչ միայն այն պատճառով, որ այնտեղ դարեր առաջ կայք է հաստատել հայությունը, իր զորեղ հետքը թողել ռումին կյանքում եւ նպաստել երկրի առաջընթացին, այլ նաեւ այն պատճառով, որ Ռումինիան պարգեւել է մեզ Հայոց Հայրապետ՝ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոս, որ դժվարին ժամանակներում կարեւոր ծառայություն մատուցեց մեր ժողովրդին», - նշեց Նորին Սրբությունը՝ ընդգծելով, որ Վազգեն Ա Հայրապետի շնորհիվ է նաեւ այդ սերը ձեւավորվել Ռումինիայի հանդեպ: Տարիներ առաջ իրեն շնորհված Ռումինիայի բարձրագույն պարգեւը՝ «Ռումինիայի աստղը», Հայոց Հայրապետը նկատեց իբրեւ գնահատանք Ռումինիայի կյանքում հայ ժողովրդի ունեցած կարեւոր դերակատարության եւ ծառայության:

Նախարար Թեոդոր Բակոնսկին իր հերթին ուրախություն հայտնեց կարեւոր այս սրբավայր այցելելու հնարավորության համար եւ Նորին Սրբությանը փոխանցեց Ռումին Ուղղափառ Եկեղեցու Դանիել պատրիարքի եղբայրական ողջույնները: Տիար Բակոնսկին կարեւորեց երկու Քույր եկեղեցիների դերակատարությունը հայ եւ ռումին ժողովուրդների միջև բարեկամության ամրապնդման գործում:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց եկեղեցիների կարեւոր առաքելությանը երիտասարդ սերնդի դաստիարակության գործում՝ հեռու պահելու երիտասարդությանը կյանքի սխալ ընթացքներից եւ հավատարիմ՝ իր ազգային արմատներին: Այս առնչությամբ Նորին Սրբությունը, ներկայացնելով ռումինահայերի հոգեւոր կյանքը եւ Ռումինիայի հայոց թեմի գործունեությունը, ուրախությամբ արձանագրեց՝ Ռումինիայի հայ համայնքն արդեն եպիսկոպոս առաջնորդ ունի՝ ի դեմս Տ. Տաթեւ եպիսկոպոս Հակոբյանի:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Ռումինիայի Արտաքին գործերի նախարարին տեղեկացրեց նաեւ, որ առաջիկա տարվա օգոստոսին Ռումինիայում կմասնակցի Սուչավայի Հաճկատար Ս. Աստվածածին հայկական վանքի հիմնադրման 500-ամյակի տոնակատարություններին եւ կհանդիսապետի վանքի վերաօծման արարողությունը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՊՀ ՄԻՋԿՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԸ ԵՐԵՒԱՆՈՒՄ

Նոյեմբերի 28-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերով Երեւանում, Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում, գումարվեց ԱՊՀ Միջկրոնական խորհրդի նախագահության նիստը:

Ժողովի առիթով նոյեմբերի 28-ի առավոտյան Հայաստան ժամանեցին ԱՊՀ Միջկրոնական խորհրդի համապետական ներկայացուցիչներ Նորին Սրբություն Կիրիլ Ա Մոսկվայի եւ Համայն Ռուսիոց Պատրիարքը եւ Կովկասի մահմեդականների վարչության նախագահ Շեյխ ուլ Իսլամ Ալլահշուքյուր Փաշա Զադեն: Ժողովին մասնակցում էին ԱՊՀ երկրների ավանդական կրոնների (քրիստոնեություն, իսլամ, հուդայականություն, բուդդիզմ) շուրջ երեք տասնյակ առաջնորդներ ու ներկայացուցիչներ:

Ժողովը բացվեց Մոսկվայի եւ Համայն Ռուսիոց Պատրիարք Նորին Սրբություն Կիրիլ Ա-ի ողջույնի խոսքով: Այնուհետեւ ներկաներին իր ողջույնի խոսքը հղեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Ժողովականներին ողջունեց նաեւ Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը, ապա ընթերցվեց ՌԴ նախագահ Դիմիտրի Մեդվեդեւի ուղերձը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ ԱՊՀ ՄԻՋԿՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎԻՆ

(Երեւան, նոյեմբերի 28, 2011 թ.)

Կամոքն Ամենաբարձրյալի այս բարեժամ առիթն ունենք եւ ուրախությունը՝ ողջունելու եւ հյուրընկալելու ԱՊՀ Միջկրոնական խորհրդի նախագահության բարձրապատիվ անդամներիդ եւ նիստի մասնակիցներիդ ապրվածաշնչական Հայաստանում, որ հայրենիքն է հազարամյակների պատմություն ունեցող եւ քրիստոնեությունը 1700 տարի իր ինքնությունը դարձրած հայ ժողովրդի: Հնագույն քաղաքակրթություններին հասակակից մեր երկիրը ծաղկել ու բարգավաճել է աշխատասեր ու խաղաղասեր մեր ժողովրդի ջանք ու արարումով, դարձել քրիստոնեական հարուստ մշակույթի օրրան, որտեղ պահպանվել են նաեւ այլ մշակույթների արժեքներ եւ գտնվում են մեր պետության մասնավոր հոգա-

ծության ու խնամքի ներքո: Այսօր էլ հավատավոր մեր ժողովուրդը ապրում է եւ կառուցում իր հայրենիքի ազատ նոր կյանքը խաղաղության եւ ազգերի մեջ հարգանքի ու բարեկամության ձգտումով: Խաղաղարար ու հաշտարար բոլոր ջանքերին նաեւ՝ հոգեւոր առաջնորդներիս այս հավաքին հայցում ենք Բարձրյալի օրհնությունը:

Առաջին անգամ Երեւանում գումարվող ԱՊՀ Միջկրոնական խորհրդի նախագահության ժողովը շարունակությունն է ցայսօր եղած հանդիպումների՝ զորացնելու համար մեր համագործակցությունը՝ հանուն մեր ժողովուրդների կյանքում եւ աշխարհում բարոյական արժեքների ամրագրման, հոգեւոր առաջընթացի եւ խաղաղության հաստատման ու արդյունավորման. «Խաղաղութիւն արարէք ընդ միմեանս» (Մարկ. Թ 49),- պատգամում է մեզ Ամենակարող եւ Բարեգութ Աստված:

Աշխարհն այսօր կանգնած է նոր մարտահրավերների առջեւ: Համաշխարհայնացման ներկա ընթացքների պայմաններում ինտեգրացվող տնտեսական, գիտական, մշակութային ձեռքբերումների կողքին լուրջ մտահոգությունների տեղիք են տալիս շարունակվող բռնություններն ու պատերազմները, դեռեւս չհաղթահարած ընդհանուր տնտեսական եւ ֆինանսական ճգնաժամը, սոցիալ-քաղաքական ընդվզումները Հյուսիսային Աֆրիկայում եւ Մերձավոր Արեւելքում: Ազգերի համակեցության ու համագործակցության, կրոնական եւ մշակութային երկխոսությունների կողքին վտանգվում են հոգեւոր-բարոյական արժեքները, աճող բարեկեցությանն ու հարստությանը զուգահեռ ավելի մեծ տարածում են գտնում կարիքն ու աղքատությունը:

Առկա հրամայականների դիմագրավման եւ հակամարտությունների կարգավորման համար, մարդասիրական արժեքների տարածման եւ ժողովուրդների ազատ ապրելու ու իրենց հավատքը անկաշկանդորեն դավանելու աստվածապարգեւ իրավունքները հարգելու գործում էական է կրոնական առաջնորդներիս համագործակցությունը, քանզի հուզող հարցերի վճռման համար առաջնային նշանակություն ունեն բարոյական սկզբունքների արժեւորումը, բարի կամքը, փոխհասկացողության ու հանդուրժողության ոգին, հարգանքը այլ ժողովուրդների ու մշակույթների նկատմամբ: ԱՊՀ երկրները բազմազգ ու բազմամշակույթ աշխարհ են ներկայացնում, որն ունի բարեկամության դարավոր ավանդներ: Այդ ավանդներն իրենց արտահայտությունը գտան նույնիսկ խորհրդային աստվածմերժության շրջանում եւ այսօր ավելի պիտի ամրանան ու զարգանան, երբ մեր ժողովուրդները իրենց ազատ, ինքնիշխան երկրներում վերականգնում են իրենց հոգեւոր կյանքը, ձգտում ապրել հավատքով ու աստվածպաշտությամբ:

Մեր ընդհանուր առաքելությունից բխող պատասխանատվությամբ այսօր մենք համախմբվել ենք համագործակցաբար ուղիներ փնտրելու մեր ժողովուրդներին մտահոգող հարցերի կարգավորման համար: Ցավոք, քիչ չեն հակամար-

փությունների հետեւանք հանդիսացող եւ լուծման կարոտ հրատապ խնդիրները, որոնց շարքում նաեւ՝ Ղարաբաղյան հարցը: Մեր ժողովրդի, Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունների իշխանությունների ձգտումն է եղել կայուն դարձնել խաղաղությունը, ամրապնդել բարի հարաբերությունները եւ համագործակցությունը հարեւան եւ բոլոր պետությունների ու ժողովուրդների հետ: Այդ ձգտումի վկայությունն էր նաեւ Թուրքիայի հետ առանց նախապայմանների հարաբերությունները կարգավորելու Հայաստանի Հանրապետության Նախագահի նախաձեռնությունը, որն, ինչպես գիտեք, ընթացք չունեցավ Թուրքիայի ժխտողական դիրքորոշման պատճառով: Մեր ժողովուրդը շարունակում է մնալ խաղաղ բանակցային ընթացքով հարցերի կարգավորման դիրքերում, եւ մեր Եկեղեցին իր ամեն կարելիությամբ այսուհետ եւս պիտի աջակցի տարածաշրջանում եւ աշխարհում խաղաղության ամրապնդմանը, որպեսզի մարդիկ ապրվածապարգեւ ազատ կյանքով հնարավորություն ունենան կառուցելու իրենց բարօր ու երջանիկ ներկան ու գալիքը:

Ուրախ ենք, որ միջնորդական ջանքերով եւ նախագահությամբ Նորին Սրբություն Կիրիլ Առաջին Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Պատրիարքի, ԱՊՀ կրոնապետերի Նախագահության նիստերին հարակից տեղի են ունենում նաեւ կովկասյան տարածաշրջանի հոգեւոր առաջնորդներիս եռակողմ հանդիպումները: Միմյանց հանդեպ խորին հարգանքով եւ Ամենաբարձրյալի պատվիրած ու պարգեւած եղբայրական սիրով մենք ձգտում ենք նպաստել մեր ժողովուրդների միջեւ առկա խնդիրների լուծմանը, փոխըմբռնման ոգու եւ բարի կամքի զորացմանը, երկխոսության արդյունավորմանը: Մենք վստահ ենք, որ այլընտրանք չկա խաղաղությանը, եւ հակամարտություններն ու խնդիրները իրենց լուծումը պիտի գտնեն խաղաղ բանակցային գործընթացներով, մարդկային հիմնարար իրավունքների պաշտպանության եւ միջազգային օրենքների հարգման ճանապարհով: Պատմությունը շարունակ վկայում է, որ խաղաղությունը, կյանքի ներդաշնակ զարգացումն ու առաջընթացը կարող են մնայուն լինել եւ ուրախություն ու երջանկություն պարգեւել, երբ հիմնված են արդարության, իրավունքի, ճշմարտության, հասարակության հոգեւոր ներուժի ամուր հիմքերի վրա:

Բարձրապատիվ սիրելի եղբայրներ, հոգեւոր այրեր, Աստված հնարավոր է դարձրել մեր այս հանդիպումը, որպեսզի կարողանանք մեր ժողովուրդների կյանքի հրամայականներին եւ խնդիրներին դիմագրավելու ուղիներ գտնել՝ պահպանելով նրանց խաղաղության մեջ եւ ապրվածահաճո ընթացքներում: Մաղթում ենք, որ Աստծուց շնորհ ունենանք կրոնական առաջնորդներիս այս հավաքը դեպի իր նպատակը առաջնորդելու: Հայցում ենք Ամենակարող Աստծուց, որ արդյունավոր դարձնի համատեղ մեր աշխատանքը եւ զորացնի մեզ մարդկանց սրտերում ամրապնդելու սերն ու խաղաղությունը միմյանց հանդեպ:

Սիրեցյալ եղբայր ի Քրիստոս, Մոսվայի եւ Համայն Ռուսիո Պատրիարք Կիրիլ Առաջին, մեր հանդիպման այս ուրախ առիթն ունենալով, այսօր վերստին

Դիմավորում Զվարթնոց օդանավակայանում

Համաժողովի մասնակիցները

Համաժողովի նախագահությունը

շնորհավորում ենք Ձերդ Սրբությանը ծննդյան 65-րդ տարեդարձի առիթով եւ քաջառողջ, արեւշատ կյանքի Մեր բարեմաղթանքներով՝ Տիրոջ զորակցությունը հայցում Ձեզ ու Ձեր նախանձախնդիր ջանքերին, որ ի գործ եք դնում՝ ի սեր առավել արդար, բարի ու խաղաղ աշխարհի: Ամենայն բարյաց մաղթանքով, սիրելի եղբայրներ եւ բարձրապատիվ հոգեւոր առաջնորդներ, շնորհակալության Մեր խոսքն ենք բերում Ձեզ, որ ժամանել եք Հայաստան եւ մասնակցում եք ԱՊՀ երկրների կրոնապետերի ժողովին, որը, վստահ ենք, բարի արձագանք պիտի գտնի մեր ժողովուրդների հավատավոր զավակների հոգիներում եւ արգասավորվի բարի արդյունքներով:

Մեր օրհնությունն ենք բերում եւ շնորհակալություն հայտնում Հայաստանի Հանրապետության իշխանություններին՝ ժողովի աշխատանքներին բերած աջակցության համար:

Թող Աստված օրհնի այս ժողովը եւ զորակից լինի մեզ ու մեր ժողովուրդներին՝ բարին արարելու եւ մեր կյանքը Իր Սուրբ Կամքի համաձայն ապրելու:

ՀՈԳԵՒՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ԵՌԱԿՈՂՄ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Նոյեմբերի 28-ին Երեւանում, ԱՊՀ միջկրոնական խորհրդի նախագահության նիստից հետո տեղի ունեցավ տարածաշրջանի հոգեւոր առաջնորդների եռակողմ հանդիպում՝ մասնակցությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Նորին Սրբություն Կիրիլ Ա Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Պատրիարքի եւ Կովկասի մահմեդականների վարչության նախագահ Շեյխ Ուլ Իսլամ Ալլահշուքյուր Փաշա Զադեի:

Հանդիպմանը քննարկվեցին Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրին առնչվող հարցեր, ինչպես նաեւ հակամարտության խաղաղ կարգավորման գործում տարածաշրջանի կրոնապետերի ունեցած կարեւոր դերակատարությունը:

Հանդիպման ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդես եկավ հետեւյալ խոսքով. «Քիչ առաջ մենք առիթն ունեցանք անդրադառնալու ԱՊՀ միջկրոնական գործակցության հրամայականներին եւ մտքեր փոխանակելու մեր ժողովուրդներին հուզող հարցերի շուրջ: Ուրախ ենք, որ այժմ վերսկսին հավաքվել ենք եռակողմ ձեւաչափով քննարկելու մեր տարածաշրջանի կոնկրետ խնդիրները, ի մասնավորի՝ Ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման հարցը: Հիմնախնդրի լուծմանը նպաստող բարձր մակարդակի յուրաքանչյուր հանդիպում խաղաղության ամրապնդման հույս է ներշնչում մեր ժողովուրդներին: Գոհունակությամբ ենք անդրադառնում, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների խաղաղարար եւ միջնորդական առաքելության, ինչպես նաեւ այս գործընթացում Ռուսաստանի Դաշնության նախագահ Մեծարգո տիար

Դմիտրի Մեդվեդեւի անձնական ջանքերի շնորհիվ շարունակվում են մեր երկու երկրների՝ Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպումներն ու բանակցությունները՝ հանուն Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման եւ մեր ժողովուրդների խաղաղ համակեցության: Այս առումով ողջունում ենք մեկ տարի առաջ Աստրախանում Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների կողմից ստորագրված համատեղ հայտարարությունը՝ հրադադարի ռեժիմի ամրապնդման, ռազմագերիների փոխանակման եւ զոհվածների աճյունների վերադարձման վերաբերյալ:

Հոգեւոր առաջնորդներիս նախորդ հանդիպումները եւ համատեղ հայտարարություններն ու կոչերը նույնպես որոշակի հաջողություններ են արձանագրել հիմնախնդրին կրոնական երանգ չհաղորդելու, խաղաղ պայմաններում բանակցային գործընթացները շարունակելու եւ գերիների փոխանակման արդյունքներով: Անցյալ տարի Բաքվում կրոնապետերի համաշխարհային գագաթաժողովին Մեր մասնակցությունը, եւ այսօր Հայաստանում Շեյխ ուլ Իսլամ Ալլահշուքյուր Փաշազադեի մասնակցությունը ԱՊՀ երկրների կրոնապետերի նախագահության ժողովին նույնպես ձեռքբերում են, որ պիտի նպաստեն փոխվստահության եւ փոխըմբռնողության ոգու բարերար մթնոլորտի ձեւավորմանը:

Դրական այս զարգացումներով հանդերձ խաղաղությունը տարածաշրջանում փխրուն է: Իրավիճակի կայունացմանը չեն նպաստում եւ մեծապես մտահոգիչ են աճող սպառազինությունը, դարաբաղյան սահմանահազծում հրադադարի խախտումները, դիպուկահարների գործողությունները, որոնց զոհ են դառնում անմեղ զինծառայողներ եւ քաղաքացիներ: Խաղաղության պահպանմանն ի խնդիր այսօր հրամայական է, որ դադարեն ռազմատենչ կոչերը, հրադադարի խախտման դրսեւորումները, սահմաններից հեռացվեն դիպուկահարները, ժողովուրդների միջեւ չսերմանվեն ատելություն ու թշնամանք, եւ առկա հարցերը լուծվեն բացառապես բանակցությունների միջոցով: Հոգեւոր առաջնորդներիս պարտքն է առավել ջանքեր բերել՝ ի նպաստ մեր տարածաշրջանում խաղաղության ու կայունության ամրապնդման, ազգամիջյան համագործակցության եւ համերաշխության զորացման:

Աստուծո կամքն է աշխարհում խաղաղությունը եւ ժողովուրդների միջեւ սերն ու համերաշխությունը: «Խաղաղությո՛ւն արեք. եւ խաղաղության ու սիրո Աստվածը թող լինի ձեզ հետ» (Կորնթ. ԺԳ 11),- ասում է Սուրբ Գիրքը: Խաղաղությունը Աստծո պատգամը լինելով, արարչապետեղծ մարդկային կյանքի պահանջն է: Հարեւանությամբ ապրող մեր ժողովուրդների համար, որ ձգտում են կառուցել իրենց բարօր ու երջանիկ կյանքը, այլընտրանք չկա խաղաղությանը: Հոգեւոր առաջնորդներիս խաղաղության կոչը պետք է մշտահունչ եւ լսելի դարձնենք մեր ժողովուրդներն եւ իշխանություններին, որպեսզի Բարձրյալի կամքին ներդաշնակ, խաղաղությունը հարատեւ մեզ հետ լինի:

Ձերդ Սրբություն, սիրեցյալ եղբայր ի Քրիստոս, եռակողմ հանդիպման այս առիթով աղոթքով հիշելով երանաշնորհ Ալեքսի Երկրորդ Պատրիարքին, Մեր շնորհակալությունն ենք բերում Ձեզ եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցուն, որ հակամարտության առաջին իսկ պահից միջնորդական ջանքեր գործադրեցիք ի խնդիր Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման եւ խաղաղության վերահաստատման: Հայ ժողովուրդը իր պատմության ընթացքում եղել է խաղաղության ձգտող, հարեւանների հետ համերաշխ գոյակցության ու համագործակցության ջատագով եւ միշտ հարգել է այլ ժողովուրդների կրոնական զգացումներն ու ստեղծած արժեքները: Մենք ուրախ ենք, որ միջպետական մակարդակով օրեցօր բազմակողմանի զարգանում են դարերով ամուր հայ-ռուսական եղբայրական հարաբերությունները, զորանում են նաեւ հայ-վրացական հարաբերությունները, որոնք նպաստում են մեր երկրներում հոգեւոր կյանքի առաջընթացին: Լիահույս ենք, որ ներդրվող համընդհանուր ջանքերով կկարգավորվի Ղարաբաղյան հիմնախնդիրը, եւ կվերականգնվեն մեր ժողովրդի ու պետության եւ Ադրբեջանի ու նրա ժողովրդի բարի հարաբերությունները:

Մեր հայցն է, որ Բարձրյալ Աստված Իր օրհնության ներքո խաղաղ պահի աշխարհը համայն եւ ժողովուրդներին բոլոր՝ համերաշխ գոյակցության ու համագործակցության մեջ»:

Հանդիպման ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Պատրիարքը եւ Կովկասի մուսուլմանների վարչության նախագահը ստորագրեցին համատեղ հայտարարություն:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀՈԳԵՒՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ԵՌԱԿՈՂՄ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

(Երեւան, նոյեմբերի 28, 2011 թ.)

Ձերդ Սրբություն Կիրիլ Առաջին Պատրիարք Մոսկվայի եւ Համայն Ռուսիո,

Հարգարժան Շեյխ ուլ Իսլամ Ալլահշուքյուր Փաշազադե, Կովկասի մուսուլմանների վարչության նախագահ.

Քիչ առաջ մենք առիթն ունեցանք անդրադառնալու ԱՊՀ միջկրոնական գործակցության հրամայականներին եւ մտքեր փոխանակելու մեր ժողովուրդներին հուզող հարցերի շուրջ: Ուրախ ենք, որ այժմ վերստին հավաքվել ենք

եռակողմ ձեւաչափով քննարկելու մեր տարածաշրջանի կոնկրետ խնդիրները, ի մասնավորի՝ Ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման հարցը: Հիմնախնդրի լուծմանը նպաստող բարձր մակարդակի յուրաքանչյուր հանդիպում խաղաղության ամրապնդման հույս է ներշնչում մեր ժողովուրդներին: Գոհունակությամբ ենք անդրադառնում, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների խաղաղարար եւ միջնորդական առաքելության, ինչպես նաեւ այս գործընթացում Ռուսաստանի Դաշնության նախագահ Մեծարգո Տիար Դմիտրի Մեդվեդեւի անձնական ջանքերի շնորհիվ շարունակվում են մեր երկու երկրների՝ Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպումներն ու բանակցությունները՝ հանուն Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման եւ մեր ժողովուրդների խաղաղ համակեցության: Այս առումով ողջունում ենք մեկ տարի առաջ Ասպրահանում Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների կողմից ստորագրված համատեղ հայտարարությունը՝ հրադադարի ռեժիմի ամրապնդման, ռազմագերիների փոխանակման եւ զոհվածների աճյունների վերադարձման վերաբերյալ:

Հոգեւոր առաջնորդներիս նախորդ հանդիպումները եւ համատեղ հայտարարություններն ու կոչերը նույնպես որոշակի հաջողություններ են արձանագրել հիմնախնդրին կրոնական երանգ չհաղորդելու, խաղաղ պայմաններում բանակցային գործընթացները շարունակելու եւ գերիների փոխանակման արդյունքներով: Անցյալ տարի Բաքվում կրոնապետերի համաշխարհային գագաթժողովին Մեր մասնակցությունը, եւ այսօր Հայաստանում Շեյխ ուլ Իսլամ Ալլահշուքյուր Փաշազադեի մասնակցությունը ԱՊՀ երկրների կրոնապետերի նախագահության ժողովին նույնպես ձեռքբերում են, որ պիտի նպաստեն փոխվստահության եւ փոխըմբռնողության ոգու բարերար մթնոլորտի ձեւավորմանը:

Դրական այս զարգացումներով հանդերձ խաղաղությունը տարածաշրջանում փխրուն է: Իրավիճակի կայունացմանը չեն նպաստում եւ մեծապես մտահոգիչ են աճող սպառազինությունը, ղարաբաղյան սահմանահազծում հրադադարի խախտումները, դիպուկահարների գործողությունները, որոնց զոհ են դառնում անմեղ զինծառայողներ եւ քաղաքացիներ: Խաղաղության պահպանմանն ի խնդիր այսօր հրամայական է, որ դադարեն ռազմատենչ կոչերը, հրադադարի խախտման դրսեւորումները, սահմաններից հեռացվեն դիպուկահարները, ժողովուրդների միջեւ չսերմանվեն ատելություն ու թշնամանք, եւ առկա հարցերը լուծվեն բացառապես բանակցությունների միջոցով: Հոգեւոր առաջնորդներիս պարտքն է առավել ջանքեր բերել՝ ի նպաստ մեր տարածաշրջանում խաղաղության ու կայունության ամրապնդման, ազգամիջյան համագործակցության եւ համերաշխության զորացման:

Աստուծո կամքն է աշխարհում խաղաղությունը եւ ժողովուրդների միջեւ սերն ու համերաշխությունը: «Խաղաղությո՛ն արեք. եւ խաղաղության ու սիրո

Աստվածը թող լինի ձեզ հետ» (Բ Կորնթ. ԺԳ 11),- ասում է Սուրբ Գիրքը: Խաղաղությունը Աստծո պատգամը լինելով, արարչաստեղծ մարդկային կյանքի պահանջն է: Հարեւանությամբ ապրող մեր ժողովուրդների համար, որ ձգտում են կառուցել իրենց բարօր ու երջանիկ կյանքը, այլընտրանք չկա խաղաղությանը: Հոգեւոր առաջնորդներիս խաղաղության կոչը պետք է մշտահունչ եւ լսելի դարձնենք մեր ժողովուրդներն եւ իշխանություններին, որպեսզի Բարձրյալի կամքին ներդաշնակ՝ խաղաղությունը հարատեւ մեզ հետ լինի:

Ձերդ Սրբություն, սիրեցյալ եղբայր ի Քրիստոս, եռակողմ հանդիպման այս առիթով աղոթքով հիշելով երանաշնորհ Ալեքսի Երկրորդ Պատրիարքին, Մեր շնորհակալությունն ենք բերում Ձեզ եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցուն, որ հակամարտության առաջին իսկ պահից միջնորդական ջանքեր գործադրեցիք ի խնդիր Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման եւ խաղաղության վերահաստատման: Հայ ժողովուրդը իր պատմության ընթացքում եղել է խաղաղության ձգտող, հարեւանների հետ համերաշխ գոյակցության ու համագործակցության ջատագով եւ միշտ հարգել է այլ ժողովուրդների կրոնական զգացումներն ու ստեղծած արժեքները: Մենք ուրախ ենք, որ միջպետական մակարդակով օրեցօր բազմակողմանի զարգանում են դարերով ամուր հայ-ռուսական եղբայրական հարաբերությունները, զորանում են նաեւ հայ-վրացական հարաբերությունները, որոնք նպաստում են մեր երկրներում հոգեւոր կյանքի առաջընթացին: Լիահույս ենք, որ ներդրվող համընդհանուր ջանքերով կկարգավորվի Ղարաբաղյան հիմնախնդիրը, եւ կվերականգնվեն մեր ժողովրդի ու պետության եւ Արբեջանի ու նրա ժողովրդի բարի հարաբերությունները:

Մեր հայցն է, որ Բարձրյալ Աստված Իր օրհնության ներքո խաղաղ պահի աշխարհը համայն եւ ժողովուրդներին բոլոր՝ համերաշխ գոյակցության ու համագործակցության մեջ:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՀՈԳԵՒՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Նոյեմբերի 28-ին Երեւանում տեղի ունեցած տարածաշրջանի հոգեւոր առաջնորդների եռակողմ հանդիպման ժամանակ, որին մասնակցում էին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Նորին Սրբություն Կիրիլ Ա Մոսկվայի եւ Համայն Ռուսիոց Պատրիարքը եւ Կովկասի մահմեդականների վարչության նախագահ Շեյխ ուլ Իսլամ Ալլահշուքյուր Փաշա Զադեն, ստորագրվեց համատեղ հայտարարություն:

Հայտարարության մեջ ասվում է.

«Այսօր մենք վերստին հավաքվել ենք միասին, որպեսզի գտնենք ուղիներ ի նպաստ Կովկասում հակամարտությունների լուծման եւ ճշմարիտ խաղա-

դության հաստատման: Շարունակելով նախորդ հանդիպումների ավանդույթը՝ կրկին հաստատում ենք, որ հոգեւորականության եւ հավատացյալների ջանքերն ի զորու են անմիջական կերպով բարերար ազդեցություն ունենալ մեր տարածաշրջանի իրավիճակի վրա:

Ցավոք, տարածաշրջանի շատ ժողովուրդներ նախկինի պես բաժանված են միմյանցից թշնամությամբ եւ անվստահությամբ: Մենք բոլորս կրում ենք մինչեւ վերջ չկարգավորված հակամարտությունների հետեւանքները: Քաղաքական արմատականները եւ ապակառուցողական այլ ուժեր փորձում են օգտագործել ազգային եւ կրոնական տարբերությունները հիմնավորելու համար իրենց հայտարարություններն ու գործողությունները, որոնք հիմնովին խորթ են կրոնական ավանդույթներին:

Մենք հաստատապես կողմնակից ենք առկա խնդիրների լուծմանը բացառապես խաղաղ եւ օրինական միջոցներով: Կոչ ենք անում քաղաքական գործիչներին նոր ազդակ հաղորդել երկխոսությանը՝ ուղղված Կովկասում հաստատուն խաղաղությանը խոչընդոտող տարաձայնությունների կարգավորմանը: Հոգեւոր առաջնորդները պատրաստ են լուրջ մասնակցություն ունենալ այդպիսի երկխոսությանը:

Կոչ ենք անում աջակցել հետխորհրդային ողջ տարածքում ինտեգրման գործընթացներին՝ ուղղված հասարակական բոլոր շերտերին, այդ թվում ազգային փոքրամասնություններին, նաեւ նրանց ազգային ինքնության իրացման, դավանանաքի ազատության եւ կրոնական գործունեության ապահովման ոլորտներում, հնարավորություն ընձեռել նրանց զարգացնելու իրենց մշակույթը, պահպանելու իրենց լեզուն: Անհրաժեշտ է հոգատարություն ցուցաբերել փախստականների եւ հարկադրաբար վերաբնակեցվածների հանդեպ:

Կարծում ենք, որ զանգվածային լրատվամիջոցները, հատկապես էլեկտրոնայինները, քիչ բան են անում միջկրոնական եւ միջազգային համագործակցությանը զորակցելու գործում: Անհրաժեշտ է լայն ամբիոն տրամադրել ոչ թե երկպառակություն, թշնամություն սերմանող ծայրահեղականներին, այլ կրոնական եւ ազգային համայնքների այն առաջնորդներին, ովքեր խաղաղություն են քարոզում եւ տրամադիր են միմյանց հետ երկխոսության:

Վկայում ենք, որ մեր երկրների հոգեւոր առաջնորդների հանդիպումները բավարար չափով ոչ միայն նպաստել են հակամարտությունների զինված փուլի դադարեցմանը, այլեւ թույլ չեն տվել, որ դրանք վերածվեն կրոնական հակամարտության:

Կարեւոր ենք համարում Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման միջնորդական ջանքերի շարունակումը՝ միջազգային իրավունքի հիման վրա ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում: Ընդգծում ենք, որ հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացը շարունակական ջանքեր է պահանջում հրադադարի ռեժիմի եւ փոխվստահության ամրապնդ-

ման համար: Ողջունելով ռազմագերիների փոխանակման եւ զոհվածների մարմինների վերադարձման շուրջ պայմանավորվածությունները՝ վճռականորեն կոչ ենք անում հակամարտող կողմերին ապացուցել իրենց հավատարմությունը տարածաշրջանի խաղաղության ու կայունության հանդեպ եւ միջազգային իրավունքի համընդհանուր նորմերին, պայմանավորվել առաջավոր դիրքերից դիպուկահարների հեռացման մասին, գործնականում հաստատել միջազգային հանրության առջեւ ստանձնած պարտավորությունների հստակ իրականացման պատրաստակամությունը:

Կիսելով մարդկանց անհանգստությունը, ովքեր մտահոգված են պատմության եւ մշակույթի հուշարձանների ավերմամբ, հայտարարում ենք տարածաշրջանի ժողովուրդների մշակութային ժառանգության պահպանմանը բոլոր միջոցներով աջակցելու մտադրության մասին:

Գիտակցելով մեր վրա դրված պատասխանատու առաքելությունը՝ հաստատակամորեն կոչ ենք անում պետական առաջնորդներին անհրաժեշտ ջանքեր գործադրել, որպեսզի թշնամությունն ու ատելությունը ընդմիշտ մնան անցյալում:

Դիմում ենք մեր երկրների ավանդական կրոնների հավատացյալներին սիրո եւ խաղաղության խոսքերով: Հույս ունենք, որ անկեղծ հավատացյալ անձինք մշտապես հաշտեցման ոգի կսերմանեն ազգերի միջեւ հարաբերություններում եւ կդիմակայեն կրոնը պարսավելի նպատակներով ծառայեցնելու փորձերին:

Թող Կովկասի բարեբեր հողի վրա հաստատվի կայուն եւ արդար խաղաղություն, իսկ մեր ժողովուրդները ժառանգեն բարօրություն եւ բարգավաճում:

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՒ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ
ԿԻՐԻԼ ԱՌԱՋԻՆ
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿՈՎԿԱՍԻ ՄԱՀՄԵԴԱԿԱՆՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ՇԵՅԽ ՈՒԼ ԻՍԼԱՄ

ԷՋՄԻԱԾԻՆԸ ՈՐՊԵՍ ԿԱՆԱՉ ՈՒԽՏԱՏԵՂԻ. ՄԻՋԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԻՏԱԼԻԱՅԻ ԱՍԻԶԻ ՔԱՂԱՔՈՒՄ

Հոկտեմբերի 31-ց նոյեմբերի 2-ը Իտալիայի Ասիզի քաղաքում տեղի ունեցավ «Բնապահպանությունն ու կրոնները» միջազգային-միջկրոնական կազմակերպության «Կանաչ ուխտատեղիների ցանց» կազմակերպության հանդիպումը՝ Անգլիայի Նորին Արքայական Գերազանցություն Արքայազն Ֆիլիպի

հովանավորությամբ, մասնակցությամբ աշխարհի տարբեր երկրներից եկած քրիստոնյա, մահմեդական, հրեական, հինդուական, բուդիստական, դաոիստական, շինտուական համայնքների ներկայացուցիչների:

Հավաքը, որը տոնախմբումն էր բնության եւ շրջակա միջավայրի պահպանության նպատակով 1986 թ. Ասիզիում տեղի ունեցած աշխարհի խոշորագույն հինգ կրոնների առաջնորդների առաջին հանդիպման հոբելյանի՝ նպատակ էր հետապնդում խթանել Կանաչ ուխտագնացությունը, համատեղ ծրագրերի նոր ուղիներ փնտրել եւ կապեր հաստատել:

Միջոցառումները սկսվեցին հոկտեմբեր 31-ին Սուրբ Ֆրանցիսկ Ասիսացու սրբատեղի տաճարի մոտից սկսված թափորով եւ միջկրոնական աղոթքի արարողությամբ, նոյեմբերի 1-ին եւ 2-ին հավաքի մասնակիցները լսեցին բանախոսություններ «Կանաչ ուխտատեղի» թեմայով, ներկայացվեցին ծրագրեր ու այս ուղղությամբ կատարվող աշխատանքներ: Որպես Կանաչ ուխտատեղի ծրագրերի ու միջոցառումների մասնակիցներն արժանացան կազմակերպության հատուկ վկայականի՝ ձեռամբ Քենթի իշխանուհու:

Միջոցառումներին Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուց եւ Էջմիածնի քաղաքապետարանից մասնակցում էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների գրանսենյակի պատասխանատու Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը, Գլոր սեղան բարեգործական հիմնադրամի գործադիր տնօրեն դոկտ. Կարեն Նազարյանը եւ Էջմիածնի քաղաքապետարանի արտաքին հարաբերությունների բաժնի տնօրեն Սամվել Մադոյանը, որոնք մասնակիցներին ներկայացրեցին՝ «Էջմիածինը որպես կանաչ ուխտատեղի» համալիր ծրագիրը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Նոյեմբերի 2-ին եւ 3-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ գումարվեց Գերագույն հոգեւոր խորհրդի հերթական ժողովը՝ ընդլայնված կազմով:

Առաջին նիստի սկզբում Ամենայն Հայոց Կաթողիկոսը ողջունեց Երուսաղեմի Հայոց պատրիարքության եւ Կ. Պոլսի Հայոց պատրարքության ներկայացուցիչների մասնակցությունը ժողովին, ապա իր օրհնությունը եւ գնահատանքը բերեց խորհրդի անդամներին:

Մինչ օրակարգին անցնելը Երուսաղեմի Հայոց պատրիարքության վերաբերյալ տեղեկություններ փոխանցեց Տ. Արիս արքեպիսկոպոս Շիրվանյանը:

Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքության գործունեության վերաբերյալ զեկուցեց Կ. Պոլսի պատրիարքական ընդհանուր փոխանորդ Տ. Արամ արքեպիսկոպոս Աթեշյանը:

Ժողովի նիստերն ատենապետեցին Արիս արքեպիսկոպոս Շիրվանյանը եւ Արամ արքեպիսկոպոս Աթեշյանը:

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու կանոնական, սրբադասման եւ ծիսական հանձնախմբերի համանախագահներ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը, Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը եւ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը զեկույցներ ներկայացրին հանձնախմբերի կատարած աշխատանքների վերաբերյալ: Գերագույն հոգեւոր խորհուրդը գոհունակությամբ ընդունեց սրբազան հայրերի զեկույցները՝ հորդորելով շարունակել աշխատանքները՝ ի նպաստ Հայ Եկեղեցու կանոնական եւ ծիսական խնդիրների հաղթահարման: Այնուհետեւ Արշակ սրբազանը ներկայացրեց թեմերի կանոնադրություններում թեմական-ծիսական կանոնադրության ուղենշային փաստաթղթի ներդրման գործընթացի արդյունքները: Ժողովականները մեծապես կարեւորեցին այդ գործընթացը՝ թեմերում փաստաթղթի ներդրման վերջնաժամկետ սահմանելով 2012 թվականը:

Ժողովում անդրադարձ կատարվեց մի շարք թեմական հարցերի: Շվեյցարիայի Հայոց թեմի գործունեության վերաբերյալ զեկույց ներկայացրեց առաջնորդական տեղապահ Տ. Մեսրոպ վարդապետ Պարսամյանը՝ տեղեկացնելով, որ արդեն հաղթահարվել են թեմական կյանքում վերջին շրջանում տեղ գտած խնդիրները եւ Ժնեւի Ս. Հակոբ եկեղեցում վերսկսվել է պատարագների մատուցումը: Խորհրդի անդամները գոհունակությամբ ընդունեցին զեկույցը՝ հաջողություն մաղթելով առաջնորդական տեղապահին եւ թեմական խորհրդին շվեյցարահայ համայնքի հոգեւոր կյանքի կազմակերպման գործում:

Ֆրանսիայի Հայոց թեմի Նիսի եկեղեցական ծխի կացության եւ Արեւմտյան Եւրոպայի Հայրապետական պատվիրակության՝ Իսպանիայի հովվության իրավիճակի մասին զեկուցեց Տ. Նորվան արքեպիսկոպոս Զաքարյանը:

Վիրահայոց թեմին եւ Ջավախքի փոխառաջնորդությանն առնչվող խնդիրների մասին զեկուցեց թեմակալ առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը: Սրբազանը նաեւ ներկայացրեց թեմական կանոնադրության պատրաստման ուղղությամբ կատարվող աշխատանքները, ինչի հիման վրա թեմը ձեռնամուխ կլինի իրավական գրանցման:

Բուլղարիայի Հայոց թեմի ներկայիս կացության մասին զեկուցեց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Արզար վարդապետ Հովակիմյանը՝ մասնավորապես անդրադառնալով թեմի կանոնադրական խնդիրներին եւ թեմում հոգեւոր սպասավորների սակավությանը:

Գերագույն հոգեւոր խորհուրդն ի գիտություն ընդունեց Խաժակ եւ Արշակ սրբազանների զեկույցներն առաջիկա տարի զումարվելիք Հայ Եկեղեցու Ընդ-

հանուր եպիսկոպոսաց ժողովի եւ Թեմական ներկայացուցչական ժողովի նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Գերագույն հոգեւոր խորհրդին ծանուցեց նոյեմբերի 29-30-ին Հայաստանում կայանալիք ԱՊՀ երկրների հոգեւոր առաջնորդների խորհրդի նախագահության նիստի մասին՝ մասնակցությամբ խորհրդի համանախագահներ Մոսկվայի եւ Համայն Ռուսիոց Պատրիարք Կիրիլ Ա-ի եւ Կովկասի մահմեդականների առաջնորդ Շեյխ ուլ իսլամ Փաշա Զադեի: Նույն օրերին նախատեսվում է նաեւ տարածաշրջանի երկրների հոգեւոր առաջնորդների հանդիպում՝ միջնորդությամբ Մոսկվայի եւ Համայն Ռուսիոց Պատրիարքի:

Ժողովի ավարտին Գերագույն հոգեւոր խորհրդի անդամները շնորհավորեցին Վեհափառ Հայրապետին գահակալության 12-րդ տարեդարձի եւ ծննդյան 60-ամյակի առիթով՝ մաղթելով քաջառողջ կյանքի երկար տարիներ եւ արդյունաշատ գահակալություն՝ ի պայծառություն Հայոց Եկեղեցու:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԿԱՏԱՐՎԵՑ «ԳԱՐԵԳԻՆ Ա» ՀՈԳԵՒՈՐ-ԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԻՄՆԱՐԿԵՔԸ

Նոյեմբերի 5-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ «Գարեգին Ա» հոգեւոր-կրթական կենտրոնի հիմնարկեքը: Կենտրոնը կառուցվում է Մայր Աթոռի բարերարներ տեր եւ տիկին Հայկ եւ Էլզա Դիդիզյանների նվիրատվությամբ: Ճարտարապետն է Արտավազդ Նազարեթյանը:

Գոհաբանական աղոթքից ու կառուցվող շենքի հիմքերի օրհնությունից հետո ընթերցվեց այս առիթով կազմված հիշատակարանը, որում մասնավորաբար ասվում է. «...Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանավոր զավակների՝ բարեպաշտ եւ ազգասեր Դիդիզյան ամոլի նվիրաբերությամբ կառուցվող այս կրթական կենտրոնը պիտի ծառայի եկեղեցականների եւ ուսուցիչների վերապատրաստության կարեւոր առաքելությանը, աստվածաբանական, եկեղեցագիտական եւ հայագիտական խորհրդաժողովների անցկացմանը: «Գարեգին Ա» կրթական կենտրոնի գործունեությունը կարեւոր ներդրում է լինելու նաեւ գիտության ասպարեզի զարգացման, նշանակալի նոր ձեռքբերումների արձանագրման գործում:

...Թող Փրկիչ մեր Տերը միշտ շեն ու պայծառ պահի Առաքելական մեր Սուրբ

Եկեղեցին, հանապազ օրհնի ազգիս բարերար զավակներին եւ նորանոր հաջողություններ շնորհի Դիդիզյան ընտանիքի եկեղեցանվեր ձեռնարկներին»:

Այնուհետեւ Նորին Սրբության հրավերով բարերարներ Հայկ եւ Էլզա Դիդիզյանները հիշատակարանով պարկուճը զետեղեցին կառուցվող կենտրոնի հիմքում: Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունն ու գնահատանքը բերեց եկեղեցանվեր Դիդիզյան ամուսիններին:

Արարողությանը մասնակցում էին Ամենայն Հայոց Հայրապետի գահակալության 12-րդ տարեդարձի եւ ծննդյան 60-րդ տարեդարձի առիթով Մայր Աթոռ ժամանած Հայ Եկեղեցու աշխարհասփյուռ թեմերի պատվիրակություններ՝ գլխավորությամբ թեմական առաջնորդների, Մայր Աթոռի բարերարներ, Մայր Աթոռի միաբաններ եւ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի սաներ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՕԾՎԵՑ ՍՐԲՈՑ ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՑ ԵԿԵՂԵՑԻՆ

Նոյեմբերի 5-ին՝ Ս. Հրեշտակապետաց տոնին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցու օծման արարողությունը: Ս. Հրեշտակապետաց եկեղեցու հիմնարկեքը կատարվել էր 2007 թվականի սեպտեմբերի 10-ին, 2011թ. օգոստոսի 23-ին՝ եկեղեցու խաչերի օծումը: Եկեղեցու նավակատիքը կատարվել էր նոյեմբերի 4-ի երեկոյան:

Գեւորգյան Հոգեւոր ճեմարանի հարեւանությամբ կառուցված այս եկեղեցու բարերարն է «Հորիզոն 95» շինարարական ընկերության տնօրեն տիար Գագիկ Գալստյանը, իսկ ճարտարապետը՝ Ջիմ Թորոսյանը:

Արարողության ընթացքում նախ ջրով եւ գինով լվացվեցին եկեղեցու Ս. Սեղանը եւ այուները, ապա Ամենայն Հայոց Հայրապետը Սրբալույս Մյուռոնով օծեց Ս. Սեղանը: ԱՄՆ Հայոց Արեւմտյան թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանը եւ Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Արմաշ եպիսկոպոս Նալբանդյանը օծեցին խորանի չորս այուները:

Եկեղեցու օրհնության եւ զոհաբանական աղոթքից հետո Հայրապետական «Պահպանիչով» ավարտվեց նորակառույց եկեղեցու օծման արարողությունը: Ապա Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանն ընթերցեց Հայրապետական Սրբատառ Կոնդակը, որով եկեղեցու բարերար Գագիկ Գալստյանին շնորհվեց Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու պատվո բարձրագույն՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» շքանշան: Կոնդակում մասնավորապես ասվում է.«Տարիներ շարու-

նակ հավատավոր ու եկեղեցասեր ոգով Դուք շինարարական ասպարեզում Ձեր փորձառությունն ու արձանագրած հաջողություններն ի սպաս եք բերում Սուրբ Էջմիածնի եկեղեցաշինական ծրագրերի իրագործմանը: Այսօր Մայր Աթոռի փարածքը բարեզարդում են Ձեր ամենօրյա հսկողության ու հոգածության ներքո կառուցված ու հիմնանորոգված շինությունները՝ ծառայելով մեր եկեղեցականներին ու հավատացյալներին:

Ձեր անունը Դուք արձանագրեցիք նաեւ Սուրբ Էջմիածնի բարերարների պատվավոր շարքում՝ ազնիվ, սրտաբուխ ցանկությամբ հովանավորելով Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցու կառուցումը: Ձեր գործերում արտացոլվում է առ Աստված հավատքը եւ հոգու ջերմ սերը առ մեր Սուրբ Եկեղեցին ու հարազատ ժողովուրդը: Մենք գոհունակ սրտով փառք ենք մատուցում Ամենակալ Աստծուն, որ մեր Սուրբ Եկեղեցին զորանում ու պայծառանում է իր հավատացյալ զավակների հանձնառություններով»:

Այնուհետեւ Նորին Սրբությունը բարերարի կուրծքը զարդարեց «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով: Վերջում Նորին Սրբությունն իր օրհնությունը բերեց ներկա ժողովրդին: «Ուրախությամբ եւ անսահման բերկրանքով է լի Հայրապետիս հոգին, քանզի այսօր Հայոց աշխարհի խաղաղ երկնքի ներքո վեր է հառել Աստուծո մի նոր սուրբ տաճար, մեր ժողովրդի համար մի նոր աղոթատեղի՝ Սրբոց Հրեշտակապետաց այս հոյակերտ եկեղեցին:

Աստուծո նախախնամության ներկայության եւ բարի հոգածության վկայություն է, որ Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցու շինարարության ավարտն ու օծման այս հոգեպարար արարողությունը համընկան մեր Եկեղեցում Սրբոց Հրեշտակապետաց Գաբրիելի, Միքայելի եւ ամենայն երկնային զորաց տոնի օրվա հետ:

...Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցին առաջնային նշանակություն պիտի ունենա Գեւորգյան Ճեմարանի սաների հոգեւոր կյանքի բարեզարդության համար: Այստեղ ճեմարանի սաներ պիտի աղոթեն՝ մասնակցելով ժամերգությունների եւ Սրբազան Պատարագի արարողությանց:

...Սիրելի ճեմարանականներ, ահավասիկ ավարտին հասցվեց եւ ձեր հոգեւոր կարիքներին ի ծառայություն դրվեց Սրբոց Հրեշտակապետաց այս եկեղեցին: Հայրապետական մեր հորդորն ու պատգամն է, որ լինեք անձանձրույթ աղոթքի մեջ եւ ջերմեռանդ՝ աստվածպաշտության ժամանակ: Ձեր աղոթքներում հիշեցեք եկեղեցու բարերարին, նրա ընտանիքին, եկեղեցու ճարտարապետին, ինչպես եւ բոլոր շինարարներին ու այն մարդկանց, ովքեր իրենց աջակցությունն են ցուցաբերել այս եկեղեցու կառուցման գործին:

Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցին խորհրդանշական կերպով կառուցվեց հենց Սուրբ Էջմիածին քաղաքի սրտում՝ իր քարեղեն կառույցով մարմնավորելով աննյութական աշխարհի բնակիչների՝ Սրբոց Հրեշտակապետաց եւ երկնային բյուր զորաց բարեխոսական աղոթքը մեր երկրի եւ հավատավոր ժողովրդի

Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցու Ս. Սեղանի օծումը

Հրաշքների տիրոջը գնալիս Գառնի հիմի գաղտնությունը

բարօր կյանքի ու հոգեւոր զորության համար: Լիահույս ենք, որ այս եկեղեցին նոր շունչ ու թարմություն պիտի բերի ոչ միայն Գեւորգյան Հոգեւոր Ճեմարանի սանուց, այլ նաեւ Մայր Աթոռիս միաբանության հոգեւոր կյանքում», - նշեց Վեհափառ Հայրապետը: Նորին Սրբությունը նաեւ իր օրհնությունն ու բարեմաղթանքները հղեց եկեղեցու ճարտարապետ Ջիմ Թորոսյանին, շինարարներին, ինչպես նաեւ արարողությանը ներկա բարերար հայորդիներին՝ վերհիշելով հայրերի խոսքը, թե՝ երանի նրանց, ովքեր հիշատակ ունեն Սուրբ Էջմիածնում: Հայոց Հայրապետը մաղթեց, որ Բարեխնամողն Աստված մշտապես Իր Ամենախնամ Աջի հովանու ներքո պահի ու պահպանի Հայոց երկիրը, հայ ժողովրդին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն եւ արժանի անի բոլորին՝ ականատեսներն ու մասնակիցները լինելու դարերի հոլովույթում իրենց պատվավոր տեղն ունեցող հիշարժան գործերի:

Արարողությանը մասնակցում էին Հայ Եկեղեցու թեմական առաջնորդներ եւ թեմական պատվիրակներ, Մայր Աթոռի բարերարներ, Մայր Աթոռի միաբաններ, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի ուսանողներ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԳԵՒՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՒՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՀԼԻՃԻ ԵՒ ՄԱՐԶԱՍԱՀԻ ԲԱՑՈՒՄԸ

Նոյեմբերի 5-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության 12-րդ տարեդարձի եւ ծննդյան 60-ամյակի տոնակատարությունների շրջանակում տեղի ունեցավ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճի եւ մարզասրահի բացման արարողությունը: Գեւորգյան հոգեւոր ճեմարանի ուսումնական հարկաբաժնին կից մասնաշենքը նախագծել է անվանի ճարտարապետ Ջիմ Թորոսյանը: Կառույցի հիմնարկեքը տեղի է ունեցել 2009թ. հուլիսի 11-ին:

Բացման արարողությանը ներկա էին մասնաշենքի բարերարներ տեր եւ տիկին Պետրոս եւ Անանա Օրունջանկչիելները, թեմական առաջնորդներ ու Մայր Աթոռի միաբանությունը, Մայր Աթոռի բարերարներ, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի դասախոսներ ու սաներ:

Նորակառույց շենքի առջեւ, հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Հայրապետի, կատարվեց օրհնության կարգ, որից հետո բարերարները, հատելով մուտքի ժապավենը, Գարեգին Բ Վեհափառի հետ մուտք գործեցին նորաբաց մասնաշենք:

Այստեղ ներկաներին ողջունեց Գեորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Տ. Գեորգ վարդապետ Սարոյանը՝ շնորհակալություն հայտնելով Նորին Սրբությանը Գեորգյան հոգեւոր ճեմարանի սաների նկատմամբ մշտապես ցուցաբերած հայրական խնամքի եւ հոգածության համար, ինչպես նաեւ բարերարներ Պետրոս եւ Աննա Օրունջանկչիելներին՝ ճեմարանականների համար նման պայմաններ ստեղծելու համար:

Այնուհետեւ ԱՄՆ Հայոց Արեւմտյան թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանն անդրադարձավ Վեհափառ Հայրապետի եկեղեցաշեն գործունեությանը՝ վստահեցնելով, որ Հայ Եկեղեցու աշխարհասփյուռ թեմերն իրենց հոգեւոր դասով եւ բարերար զավակներով պիտի ըստ ամենայնի շարունակեն զորավիգ լինել Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ Մայր Աթոռին եւ նպաստել ազգօգուտ եւ հայրենանվեր ձեռնարկների իրագործմանը:

Իր հերթին բարերար տիկին Աննա Օրունջանկչիելն կառույցի բացման առիթով իր զգացումներն արտահայտեց եւ շնորհակալության խոսք ուղղեց Ամենայն Հայոց Հայրապետին: «Այսօր մեր կյանքի ամենաերջանիկ օրերից մեկն է: Սրտներս լեցուն են հպարտությամբ: Ցանկանում ենք մեր անկեղծ շնորհակալությունը հայտնել Ձեզ՝ Վեհափառ Տեր, որ մեզ վստահեցիք այս փառավոր շենքի բարերարությունը: Աղոթում ենք, որ մեր բոլոր զավակները շարունակեն իրենց նվիրյալ կյանքն ի սպաս Հայ Եկեղեցու եւ մնան հավատարիմ Սուրբ Էջմիածնին», - ասաց տիկին Օրունջանկչիելը՝ Նորին Սրբությանը մաղթելով քաջառողջություն եւ երկար կյանք:

Վերջում ներկաներին իր օրհնության խոսքը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Վեհափառ Հայրապետն անդրադարձավ օրվա ընթացքում Մայր Աթոռում կատարված կարեւոր միջոցառումներին՝ «Գարեգին Ա» հոգեւոր-կրթական կենտրոնի հիմնօրհնեքի, Ս. Հրեշտակապետաց եկեղեցու օծման եւ Ճեմարանի հանդիսությունների սրահի ու մարզադահլիճի բացման արարողություններին եւ դրանց կարեւոր կրթական առաքելությանը: «Այս շինությունը նույնպես կրթության նպատակին է ուղղված: Հոգով, մտքով զորացած մեր զավակները պետք ունեն նաեւ առողջ մարմնի, որպեսզի կարողանան հոգեւորականի ծանր առաքելությունն իրականացնել ամբողջանվեր ու լիարժեք կերպով: Մենք վստահ ենք, որ այս երկու հաստատությունները պիտի նոր խանդավառություն բերեն հոգեւոր ճեմարանի սաներին, եւ նրանք պիտի արդարացնեն հույսերն ինչպես մեր բարերարների, այնպես եւ մեր հավատավոր զավակների», - նշեց Նորին Սրբությունն իր խոսքում:

Վեհափառ Հայրապետն իր գնահատանքի եւ օրհնության խոսքը հղեց նաեւ կառույցի բարերար Օրունջանկչիել ընտանիքին՝ նշելով, որ բարերարների անունը հավերժորեն արձանագրված պիտի մնա Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարեգրության մեջ:

Հանդիսության ընթացքում հոգեւոր եւ ազգային երգերի կատարումներով

Ճեմարանի հանդիսությունների դահլիճի բացումը

Գարեգին Ա. կաթողիկոսի հանդիպումը

ելույթ ունեցան Գեւորգյան հոգեւոր ճեմարանի սաները եւ Նորքի Հայորդաց տան պատանիները:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Տարւոյս նոյեմբեր 5-ին նախագահութեամբ վիճակիս առաջնորդ Տ. Գարեգին արքեպս. Պէքճեանի Նոյվիփի մէջ նշուեցաւ հայ համայնքի հիմնադրման 30 ամեակը: Երեսուն տարիներ առաջ Նոյվիփ հաստատուած հայերը քով-քովի գալով հիմքը դրած էին հայ համայնքին: Ներկաներուն ողջոյնի խօսք ուղղեց Նորայր Պոյաճյան, որ համայնքին հետ հասակ առած առաջին սերունդէն է: Երեկոն իրենց ներկայութեամբ պատուեցին եւ ողջոյնի խօսքով ելոյթ ունեցան Նոյվիփի քաղաքապետ պարոն Նիկոլաուս Ռոթը, ACK-ի ատենապետուհի Մագրիփ Մորիցը, ինչպէս նաեւ առաջնորդ սրբազան Հայրը, նախ շնորհաւորելով համայնքի ներկայացուցիչները, որոնք տքնաջան աշխատանքներով պատրաստած էին երեկոն, ապա մաղթեց երկար տարիներ, որպէսզի միշտ անսասան մնայ այս համայնքը:

Երեկոն իրենց գեղեցիկ կատարումներով զարդարեց Քէօլնի համայնքէն հրաւիրուած «Կոմիտաս» երգչախումբը՝ ղեկավարութեամբ պարոն Արտակ Ոսկանեանի:

Երեկոն փակուեցաւ սրբազան Հօր աղօթքով եւ համայնքի սրահին մէջ տեղի ունեցած հիւրասիրութեամբ:

ԴԻՒԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ
ՀԱՅՈՑ ԳԵՐՄԱՆԻՈՅ

ՋԱՆՖԻԴԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈՂԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ

Ս/թ նոյեմբերի 5-ին Արմավիրի տարածաշրջանի Ջանֆիդա համայնքում կատարվեց նոր կառուցվող Սուրբ Կարապետ եկեղեցու հողի օրհնության կարգը, որը կատարեց Արմավիրի թեմի առաջնորդ Տ. Սիոն եպս. Աղամյանը՝ թեմի հոգեւոր դասի մասնակցությամբ: Հողի օրհնությանը ներկա էին Արմավիրի մարզպետ Ա. Ղահրամանյանը, մարզային եւ քաղաքային իշխանություններից ներակայացուցիչներ, հյուրեր եւ համայնքի բնակիչներ:

Եկեղեցին կառուցվում է Կարապետյան եղբայրների բարերարությամբ, ովքեր ծնունդով Ջանֆիդա գյուղից են: Դեռեւս վաղ տարիքից Կարապետյան եղբայրներն իրենց ծնողներից ստացել են քրիստոնյային վայել դաստիարակություն: Նրանց ինքնագիտակցության մեջ հաստատուն է մնացել Հայ Առաքելական Եկեղեցու հանդեպ սերը եւ նվիրվածությունը, որը պատճառ է հանդիսացել հնարավորության դեպքում կառուցելու սեփական ծննդավայրում, որտեղ չի եղել եկեղեցի Աստծո փառաբ: Կարապետյան եղբայրների երազանքն Աստծո կամքով արդեն իրականություն դառնալու արմատներն է զցում, եւ ամենակարեւորը նրանց համար այն է, որ հարազատ գյուղը նույնպես կունենա հավատքի տուն, որտեղ շարունակ կհնչի ճմարիտ հավատքի խոսքը եւ շատերին կբերի դարձի:

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ԹԵՄԻ

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՕԾՈՒՄՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Նոյեմբերի 6-ին, հընթացս Հայրապետական Ս. Պատարագի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ եպիսկոպոսական ձեռնադրություն: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ եպիսկոպոսական ձեռնադրություն եւ օծում ստացան Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Կենտրոնական Եւրոպայի եւ Ծվեդիայի Հայրապետական պատվիրակ Տ. Հայկազուն ծայրագույն վարդապետ Նաջարյանը, Մեծ Բրիտանիայի Հայոց թեմի առաջնորդ Տ. Վահան ծայրագույն վարդապետ Հովհաննիսյանը, Ռումինիայի Հայոց թեմի առաջնորդ Տ. Տաթեւ վարդապետ Հակոբյանը, Գեւորգյան Հոգեւոր ճեմարանի տեսուչ Տ. Գեւորգ վարդապետ Սարոյանը, Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Տ. Մուշեղ վարդապետ Բաբայանը եւ Մայր Աթոռի լուսարարապետ Տ. Հովնան վարդապետ Հակոբյանը:

Նոյեմբերի 5-ին, երեկոյան ժամերգությունից առաջ, Մայր Տաճարում կատարվեց ընծայացուների ուխտադրության կարգը, որի ընթացքում Հայր սուրբերը երդմնագրեր ստորագրեցին՝ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցուն եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին հավատարմության իրենց ուխտը կատարելով:

Պատարագի սրբազան արարողությունը սկսվեց Ս. Ստեփանոս Նախասարկավագի խորանի վրա, որտեղ Ամենայն Հայոց Կաթողիկոսը կատարեց ընծայացուների հավատքի ուղղափառության քննությունը: Ապագա եպիսկոպոսների արժանավորության մասին Ամենայն Հայոց Հայրապետին վկայեցին դպիրներ, կիսասարկավագներ, սարկավագներ, քահանաներ, եպիսկոպոսներ,

Եպիսկոպոսական ձեռնադրության

ինչպես նաեւ ժողովուրդը ներկայացնող աշխարհականներ: Որպես առընթերականեր Նորին Սրբությանը սպասավորում էին Եգիպտոսի Հայոց թեմի առաջնորդ Տ. Աշոտ եպիսկոպոս Մնացականյանը եւ Գեղարքունյաց թեմի առաջնորդ Տ. Մարկոս եպիսկոպոս Հովհաննիսյանը:

Այնուհետեւ Ս. Պատարագը շարունակվեց Միածնաէջ Տաճարի Ավագ Խորանին, որտեղ Նորին Սրբությունը ընծայացու Հայր Սուրբերին եպիսկոպոսության կոչեց եւ Սրբալույս Մյուռոնով օծեց նրանց ճակատներն ու աջ ձեռքերի բութ մատները: Այնուհետեւ նորաօծ եպիսկոպոսներին Վեհափառ Հայրապետը հանձնեց նաեւ եպիսկոպոսական իշխանության խորհրդանիշերը՝ եպիսկոպոսական գավազաններ եւ մատանիներ, ինչպես նաեւ Ս. Ավետարան՝ ի նշան քարոզչության:

Դիմելով ձեռնադրյալ վեց եպիսկոպոսներին՝ Նորին Սրբությունը հորդորեց Տիրոջ լույս օրինակով գործել եւ ծառայել, հաստատուն պահել իրենց ուխտը եւ տերունապատվեր առաքելությամբ հավելել իրենց ազգօգուտ ու եկեղեցանվեր գործերն ու վաստակը նորանոր արարումներով եւ ձեռքբերումներով: Ամենայն Հայոց Հայրապետը մաղթեց Հայկազուն, Վահան, Տաթեւ, Գեւորգ, Մուշեղ եւ Հովնան Սրբազաններին՝ Բարձրյալի զորակցությամբ ու օգնականությամբ առավել անձնվիրությամբ շարունակել իրենց բարի ծառայությունը բերել Քրիստոսասեր հայ ժողովրդին, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուն եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին:

«Ողջույնի» ընթացքում արարողությանը ներկա բոլոր եկեղեցականները բարձրացան Սուրբ խորան՝ առնելու նորաօծներից Ողջույնը եւ շնորհավորելու ձեռնադրության եւ օծման առիթով: Ս. Պատարագի ավարտին բարեպաշտ ժողովուրդը եւ հյուրերը եւս իրենց շնորհավորանքներն ու մաղթանքները բերեցին նորաօծ եպիսկոպոսներին:

Ձեռնադրության արարողությանը ներկա էին Վեհափառ Հայրապետի գահակալության 12-ամյակի եւ ծննդյան 60-ամյակի փոնակատարությունների առիթով Մայր Աթոռ ժամանած Հայոց Եկեղեցու նվիրապետական աթոռների ներկայացուցիչներ, աշխարհասփյուռ թեմերի առաջնորդներ եւ թեմական պատվիրակներ, Մայր Աթոռի միաբաններ, բարերար հայորդիներ, ձեռնադրյալների բարեկամներ եւ ուխտավորներ:

Առաջիկա օրերին նորաօծ եպիսկոպոսները Մայր Տաճարում կմատուցեն ուխտի պատարագներ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Տ. Հայկազուն եպիսկոպոս ՆԱՋԱՐՅԱՆ

Տ. Հայկազուն եպիսկոպոս Նաջարյանը (ավազանի անունը՝ Վրեժ) ծնվել է 1952 թ. Հալեպում:

1959-1964 թթ. սովորել է Բեյրութի Վահան Թեքեյանի անվան տարրական դպրոցում, 1964-1967 թթ.՝ Բեյրութի Հովակիմյան-Մանուկյան միջնակարգ դպրոցում:

1967 թ. ընդունվել է Էջմիածնի Գևորգյան Հոգևոր ճեմարան և ավարտել 1973 թ.: Նույն՝ 1973 թ. Գևորգյան ճեմարանում պաշտպանել է ավարտաճառ «Մխիթար Գոշ. մեկնություն Երեմիա մարգարեի» թեմայով:

Այնուհետև 1973 թ. Ս. Էջմիածնում՝ ձեռամբ Տ. Հուսիկ արքեպիկոպոս Սանթուրյանի, ձեռնադրվել է սարկավագ, իսկ 1975 թ. Լոնդոնի Ս. Սարգիս եկեղեցում ստացել է քահանայական ձեռնադրություն՝ ձեռամբ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի:

1973-1974 թթ. աշխատել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնում՝ որպես կաթողիկոսարանի քարտուղար:

1974-1975 թթ. սովորել է Քենթերբերի Ս. Օգոստինոսի դպրոցում՝ Հովվական աստվածաբանություն, 1975-1978 թթ.՝ Լոնդոնի Քինգս քոլեջում՝ ստանալով Դասակավոր աստվածաբանության (BD) աստիճան:

1978-1979 թթ. սովորել է Շոտլանդիայի Ս. Անդրյուսի անվան դպրոցում: 1979-1981 թթ. եղել է Լոնդոնի Ս. Պետրոս եկեղեցու հոգևոր հովիվ, իսկ 1981-1986 թթ. պաշտոնավարել որպես Գևորգյան հոգևոր ճեմարանի փոխտեսուչ, Նոր Կտակարանի և Ընդհանուր եկեղեցու պատմության դասախոս:

1983 թ. «Վանական շարժման սկզբնավորությունը Հայաստանում» թեմայով պաշտպանել է վարդապետական թեզ և Օշականում ստացել վարդապետական գավազան՝ ձեռամբ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի:

1986 թ. «Ս. Բարսեղ Կեսարացու կանոնները» թեմայով պաշտպանել է ծայրագույն վարդապետության թեզ և նույն թվականին՝ ձեռամբ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի, Օշականում ստացել գավազան:

1986-1988 թթ. Գարեգին Ա երջանկահիշատակ Կաթողիկոսի տնօրինությամբ նշանակվել է ԱՄՆ Հայոց Արևելյան թեմի առաջնորդական փոխանորդ,

1988-1991 թթ.՝ Նյու Ջերսիի Ս. Ստեփաննոս եկեղեցու հոգեւոր հովիվ, իսկ 1991-1995 թթ.՝ կրկին ԱՄՆ Հայոց արեւելյան թեմի առաջնորդական փոխանորդ:

1992 թ. ընդունվել է Կոլումբիայի համալսարան եւ պատմության մագիստրոսի (MA) աստիճանով ավարտել 1993 թ:

1995-1999 թթ. Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ սպանձնել է Գեորգյան հոգեւոր ճեմարանի տեսչի պաշտոնը, դասավանդել որպես Նոր Կտակարանի դասախոս:

2000-2002 թթ. եղել է Դալլասի Ս. Սարգիս եկեղեցու հոգեւոր հովիվ, իսկ 2002-2007 թթ.՝ Ֆիլադելֆիայի Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ եկեղեցու հոգեւոր հովիվ: 2002-2010 թթ. նաեւ պաշտոնավարել է որպես ԱՄՆ Արեւելյան թեմի առաջնորդական փոխանորդ, այնուհետեւ 2010 թ. նշանակվել Կենտրոնական Եւրոպայի եւ Շվեդիայի Հայրապետական պատվիրակ:

Տ. Վահան եպիսկոպոս ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Տ. Վահան եպիսկոպոս Հովհաննիսյանը ծնվել է Իրաքի Բաղդադ քաղաքում 1963 թ.:

Բաղդադում նախնական կրթությունը ստանալուց հետո ընդունվել է Բաղդադի Էլեկտրահինժիներական համալսարան եւ ավարտել այն 1985-ին:

Նույն թվականին ընդունվել է Նյու-Յորքի (ԱՄՆ Հայոց Արեւելյան թեմ) Ս. Ներսես ճեմարան՝ միաժամանակ սովորելով նաեւ Նյու-Յորքի Ս. Վլադիմիր Ուղղափառ ճեմարանում:

1989-ին ավարտել է Ս. Ներսես ճեմարանը եւ Ս. Վլադիմիր ճեմարանը, պաշտպանելով թեզ «Շահապիվանի ժողովը. թարգմանություն, ներածություն եւ մեկնաբանություն» թեմայով՝ ստացել մագիստրոսի աստիճան:

1987-ին ձեռնադրվել է սարկավագ:

1990-ին ձեռնադրվել է կուսակրոն քահանա եւ ծառայությունը բերել Բաղդադում եւ Մոսուլում:

1991-1992 թ. ծառայել է որպես Նյու Յորքի Ս. Խաչ եկեղեցու այցելու հոգեւոր հովիվ:

1992-1993 թթ. ծառայել է որպես Նյու Յորքի Ս. Վարդանանց եկեղեցու լուսարարապետ:

1993-1999 թթ. եղել է Ս. Ղեւոնդ եկեղեցու (Ֆեյեր Լոուն, Նյու Ջերսի) հոգեւոր հովիվ:

1994 թ. «Գ Կորնթացիս թուղթը Հայ Եկեղեցու գրականության մեջ» թեմայով պաշտպանել է վարդապետական թեզ եւ ստացել մասնավոր վարդապետական գավազան:

Շարունակելով ուսումնառությունը՝ մասնակցել է «Ղպտական Ընթերցվածք. Թովմասի Կտակարան», «Թալմուդ եւ Ռաբբիականություն», «Իսլամ եւ Ղուրան» դասընթացներին: Ուսանել է Բրոնքս շրջանի (Նյու-Յորք) Ֆորդհամի համալսարանում եւ 1998 թ. ավարտել այն՝ ստանալով Աստվածաշնչյան ուսումնասիրությունների դոկտորի աստիճան: Պաշտպանել է ավարտաճառ «Գ Կորնթացիս. Պողոսի վերադարձը քրիստոնեական ուղղափառության» թեմայով:

1999-2000 թթ. եղել է Ս. Ներսես ճեմարանի տեսչի պաշտոնակատար:

2006 թ. «Նոր Կտակարանի պարականոն բնագրերը եւ Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը» թեմայով պաշտպանել է ծայրագույն վարդապետական թեզ՝ արժանանալով ծայրագույն վարդապետական աստիճանի:

2000-2010 թթ. եղել է Ս. Մարտիրոսաց եկեղեցու հոգեւոր հովիվ:

2009 թ. դեկտեմբերի 14-ին ընտրվել է Մեծ Բրիտանիայի Հայոց թեմի առաջնորդ:

Տ. Վահան եպիսկոպոս Հովհաննիսյանը հեղինակ է տասնյակ աշխատությունների եւ հոդվածների: Դասախոսել է մի շարք ուսումնական հաստատություններում՝ Ջորջիայի դատական համալսարանում, Ս. Մարկոսի Ղպտական ճեմարանում, Ս. Ներսես ճեմարանում: Անդամ է Հայագիտական ուսումնասիրությունների միջազգային միության, Քրիստոնեական պարականոն գրականության ուսումնասիրության միության, Աստվածաշնչային կաթոլիկ ընկերության, «Մատենադարանի բարեկամներ» տնօրենների խորհրդի, Ամերիկայի Աստվածաբանական Ուղղափառ ընկերության, Աստվածաշնչյան ուսումնասիրությունների զարգացման ուղղափառ կենտրոնի, Հայկական հետազոտությունների հասարակության, Աստվածաշնչյան գրականության հասարակության, Արեւելյան Ուղղափառ եկեղեցիների մշտական խորհրդի, Արեւելյան հետազոտությունների ամերիկյան դպրոցի, Նյու Յորքի տնօրենների խորհրդի մարդաբանական թանգարանի:

2008-ից առ այսօր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեւորգյան Հոգեւոր ճեմարանի վարդապետական թեզերի քննության հանձնախմբի անդամ է: Աստվածաշնչյան գրականության հասարակության «Աստվածաշունչը Արեւելյան եւ Արեւլյան Ուղղափառ ավանդություններում» խորհրդի նախագահ է, 2006-ից առ այսօր Աստվածաշնչյան ուսումնասիրությունների զարգացման ուղղափառ կենտրոնի ամսագրի գլխավոր խմբագիրն է, Նյու-Յորքի Խորհրդական, Ծիսական հրատարակությունների թեմական խորհրդի խորհրդատու 2005-ից առ այսօր, Ս. Ներսես Աստվածաբանական պարբերականի խմբագիր 1998-ից առ այսօր:

Տ. Տաթեւ եպիսկոպոս ՀԱԿՈԲՅԱՆ

Տ. Տաթեւ եպիսկոպոս Հակոբյանը (ավազանի անունը՝ Հրաչ) ծնվել է 1966 թ. Իրաքի Մուսուլ քաղաքում:

1972-1979 թթ. սովորել է Բաղդադի միջնակարգ դպրոցում:

1979-1986 թթ. սովորել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հոգեւոր ճեմարանում: 1986 թ. փետրվարի 14-ին Ս. Էջմիածնում ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Հուսիկ արքեպիսկոպոս Սանթուրյանի:

1986-1987 թթ. գործուղվել է Իրաքի Հայոց թեմ՝ որպես սարկավագ:

1988 թ. մարտի 10-ին Էջմիածնի հոգեւոր ճեմարանում պաշտպանել է ավարտաճառը «Եւսեբիոս Կեսարացին հայ մատենագրության մեջ» թեմայով եւ արժանացել գերազանց գնահատականի:

1988-1990 թթ. ԵՀԽ հովանավորությամբ սովորել է Ժնեւի համալսարանում: Միեւնույն ժամանակ ծառայել է Ժնեւի Ս. Հակոբ եկեղեցում որպես քարտուղար եւ սարկավագ, դասավանդել է կիրակնօրյա դպրոցում: Հիմնել է Շվեյցարահայ Երիտասարդաց միությունը:

1990-1992 թթ. ծառայել է Հոլանդիայի Ս. Հոգի եկեղեցում՝ որպես քարտուղար, սարկավագ, խորհրդատու եկեղեցական վարչության, հիմնել է կիրակնօրյա վարժարան:

1993 թ. փետրվարի 18-ին՝ ձեռամբ Տ. Ավագ արքեպիսկոպոս Ասատուրյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա Բաղդադի Ս. Գրիգոր Լուսավորիչ առաջնորդանիստ եկեղեցում, սպասավորել է իբրեւ հոգեւոր հովիվ, դասավանդել քրիստոնեական կրոն Բաղդադի «Սրբոց Թարգմանչաց» Հայ Եկեղեցասիրաց Կազմակերպությունում եւ կիրակնօրյա վարժարաններում:

1993-1996 թթ. հոդվածներով հանդես է եկել «Լրաբեր» եւ «Ձայն» իրաքահայ ամսագրերում:

1996-ի հունիս-հոկտեմբեր ամիսներին նշանակվել է Պոլսի Հայոց Պատրիարքարանի «Լրաբեր» շաբաթաթերթի խմբագրության անդամ եւ հանդես է եկել մի շարք հոդվածներով:

1996-1997 թթ. հրավիրվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածին, ծառայել է Հայ Եկեղեցու ՔԴԿ-ում, դասախոսել Էջմիածնի կիրակնօրյա վարժարաններում, Կրոնի ուսուցիչների վերապատրաստման լսարաններում, քարոզներով հանդես է եկել Հայաստանի պետական հեռուստատեսութեամբ «Սիրեցէք զմիմեանս» եւ «Խորան Լուսոյ» հաղորդաշարերով, ինչպես նաեւ ձայնասփյուռով:

1997-ի սեպտեմբերին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Հայրապետի հովանավորությամբ նշանակվել է Լուսաբ նահանգի Սենթ-Էթիենի ու շրջանի հայոց հոգեւոր հովիվ:

1997-1998 թթ. ուսանել է ֆրանսերեն լեզու եւ գրականություն Սենթ-Էթիենի Ժան Մոնե համալսարանում:

1997-2004 թթ. Սենթ-Էթիենի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում հիմնել է «Թարգմանչաց» երգչախումբ, կիրակնօրյա վարժարան, Տիկնանց եկեղեցասեր հանձնախումբ, հայոց լեզվի դասարաններ երիտասարդության համար եւ «Հայ Լուար մաքազին» եռամսյա թերթը:

1999 թ. պաշտպանել է իր վարդապետական թեզը «Մատաղը հայ աստուածաբանության մեջ» թեմայով Լիոնի համալսարանի հայագիտական բաժնում եւ սեպտ. 12-ին Լիոնի Ս. Հակոբ եկեղեցում ստացել է վարդապետական աստիճան՝ ձեռամբ Տ. Նորվան եպիսկոպոս Զաքարյանի:

2000-2004 թթ. հանդես է եկել Սենթ-Էթիենի Կաթոլիկ Եկեղեցու RCF ռադիոկայանի Հայ Եկեղեցու մասին հաղորդաշարերով:

2004 թ. ապրիլին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ նշանակվել է Հոլանդիայի Հայոց հոգեւոր հովիվ:

2004-2010 թթ. հիմնել է Հոլանդիայում հինգ եկեղեցական ծուխեր՝ Արնհեմ, Տոտրեխտ, Ասսըն, Այնթհովեն եւ Մաստրիխտ քաղաքներում, ինչպես նաեւ՝ Ալմելոյի «Գեղարդ» երգչախումբը, կիրակնօրյա վարժարանը, Սուրբ Գրոց Լսարանը եւ Հայ եկեղեցասիրաց կազմակերպությունը (VAJA):

2007 թ. հոկտեմբեր 14-ին կատարել է Ամստերդամի Հայ եկեղեցասիրաց կազմակերպության (AYO) բացումը:

2008 թ. Ամենայն Հայոց Հայրապետի տնօրինությամբ վերանորոգել է հայոց հինավուրց Սուրբ Հոգի եկեղեցին:

2010 թ. Ամստերդամի վարչության նախաձեռնությամբ կանգնեցրել է Ամստերդամի Տիմըն զերեզմանոցի մեջ խաչքար-հուշարձան՝ նվիրված Հայոց Նահատակների հիշատակին: Հրատարակել է Հոլանդիայի Հայոց Հոգեւոր Հովվության պատկերազարդ եկեղեցական օրացույցը եւ կազմակերպել է սուրբ Պատարագի թարգմանությունը հոլանդերենի:

2010 թ. սեպտեմբեր 21-ին միաձայնությամբ ընտրվել է Ռումինիայի Հայոց թեմի առաջնորդ:

Հրատարակել է բազմաթիվ գիտական հոդվածներ, ստյուռքահայ մամուլում մի շարք հրապարակումների հեղինակ է:

Տ. Գեւորգ եպիսկոպոս ՍԱՐՈՅԱՆ

Տ. Գեւորգ եպիսկոպոս Սարոյանը (ավազանի անունը՝ Արման) ծնվել է 1977 թ. Մասիս քաղաքում:

1983-1993 թթ. սովորել եւ ավարտել է Մարմարաշենի միջնակարգ դպրոցը:

1993-1998 թթ. սովորել է Սեւանի Վազգենյան դպրանոցում:

1998-1999 թթ. ուսումը շարունակել է Գեւորգյան հոգեւոր ճեմարանում:

1999 թ. մայիսի 23-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Ոսկան արքեպիսկոպոս Գալփաքյանի:

2000 թ. նշանակվել է «Գարեգին Ա» գիտական կենտրոնի նյութական պատասխանատու:

2000 թ. Գեւորգյան հոգեւոր ճեմարանում պաշտպանել է ավարտաճառ «Գրիգոր Խլաթեցու Յայսմավուրքն ըստ Էջմիածնի մատենադարանի ձեռագրերի» թեմայով:

2001 թ. հունվարի 14-ին ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ վերանվանվելով Գեւորգ աբեղա Սարոյան:

2002-2003 թթ. սովորել է «Ընդհանուր հոգեբանություն եւ փիլիսոփայություն» Նյու Յորքի «Քոնքորդիա» քոլեջում:

2003-2005 թթ. սովորել է Մեծ Բրիտանիայի Լիձի համալսարանում՝ ստանալով աստվածաբանության եւ հովվագիտության բակալավրի աստիճան:

2005-2006 թթ. սովորել է Օքսֆորդի համալսարանում՝ ստանալով աստվածաբանության մագիստրոսի աստիճան:

2006-2007 թթ. աշխատել է «Գարեգին Ա» գիտական կենտրոնում որպես փոխտնօրեն:

2007 թ. նշանակվել է Վազգենյան հոգեւոր դպրանոցի փոխտեսուչ, իսկ 2008- 2010 թթ. աշխատել է որպես տեսուչ:

2010 թ. պաշտպանել է վարդապետական թեզ «Երվանդ Տեր-Մինասյանի եկեղեցագիտական գործունեությունը եւ նրա առնչությունները լիբերալ բողոքական դպրոցի հետ» թեմայով: Նույն թվականին ստացել է մասնավոր վարդապետության աստիճան Տ. Արարատ եպիսկոպոս Գալթազճյանի ձեռամբ:

2010 թ. դեկտեմբերի 10-ից նշանակվել է Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ:

Տ. Մուշեղ եպիսկոպոս ԲԱԲԱՅԱՆ

Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայանը (ավազանի անունը՝ Նելսոն) ծնվել է 1978 թ. Գորիսի շրջանի Տաթեւ գյուղում:

1984-1994 թթ. սովորել է Տաթեւի Ս. Առաքելյանի անվան միջնակարգ դպրոցում:

1994 թ. ընդունվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարան:

2000 թ. մարտի 2-ին, Սրբոց Վարդանանց տոնին՝ ձեռամբ Տ. Նավասարդ եպս. Կճոյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2000 թ. ավարտել է ճեմարանը եւ աշխատանքի անցել Վեհարանում՝ որպես Մայր Աթոռ-թեմեր (այժմ՝ Դիվանապուն) բաժնի գործավար-քարտուղար եւ Վեհափառ Հայրապետի արարողապետ:

2000-2001 թթ. Հայաստանի Ամերիկյան համալսարանում հետեւել է «Կառավարման դասընթացներ ճեմարանականների համար» ծրագրին:

2001 թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին սովորել է Ժնեւի համալսարանի աստվածաբանական ֆակուլտետին կից Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի «Բոսսե» էկումենիկ ինստիտուտում:

2002 թ. ապրիլի 11-ին պաշտպանել է ավարտաճառ «Էջմիածնի միաբանությունը եւ նրա հոգեւոր վերազարթոնքն ըստ Առաքել Դավրիժեցու» թեմայով:

2002 թ. ապրիլի 28-ին, Սուրբ Խաչի երեւման տոնին՝ ձեռամբ Տ. Նավասարդ եպս. Կճոյանի ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

2002-2004 թթ. ուսանել է Ռուսաստանի Ուղղափառ Եկեղեցու Մոսկվայի հոգեւոր ակադեմիայի ասպիրանտուրայում:

2004 թ. եղել է Մոսկվայի Սուրբ Հարություն եկեղեցու վանահայրը:

2004 թ. մայիսի 7-ին Մոսկվայի հոգեւոր ակադեմիայում պաշտպանել է թեկնածուական աշխատանք «Ս. Գրիգոր Նարեկացու կրոնաբարոյական հայացքները» թեմայով՝ ստանալով Աստվածաբանական գիտությունների թեկնածուի կոչում:

2004 թ. վերադարձել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Վեհափառ Հայրապետի օրհնությամբ նշանակվել Ինտերնետային գրասենյակի փոխտնօրեն, հայկական բաժնի պատասխանատու, միաժամանակ Գեւորգյան հոգեւոր ճեմարանում դասավանդել «Հայ Եկեղեցու պատմություն» առարկան:

2006-2007 թթ. ուսանել է Հռոմի Պապական Սալեզյան համալսարանում:

2007-2008 թթ. եղել է Մայր Աթոռի տնտեսական բաժնի տնօրենի պաշտոնակատար:

2008-2009 թ. նշանակվել է Վարչակազմակերպական գործերի փոխկառավարիչ:

2009 թ. մայիսից ցայսօր Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրենն է:

2011 թ. հուլիսի 2-ին պաշտպանել է վարդապետական թեզ «Ս. Գրիգոր Նարեկացու կրոնաբարոյական հայացքները ըստ «Մատեան Ողբերգութեան»» թեմայով՝ ձեռամբ Տեր Փառեն եպիսկոպոսի ստանալով վարդապետական աստիճան:

Գեւորգյան հոգեւոր ճեմարանում դասավանդում է «Հայ Եկեղեցու պատմություն» առարկան:

Տ. Հովնան եպիսկոպոս ՀԱԿՈԲՅԱՆ

Տ. Հովնան եպիսկոպոս Հակոբյանը (ավազանի անունը՝ Արթուր) ծնվել է 1978 թ. Գյումրի քաղաքում:

1985-1993 թթ. սովորել է տեղի Պետրոս Դուրյանի անվան թիվ 28 միջնակարգ դպրոցում:

1993-1997 թթ. ուսանել եւ ավարտել է Շիրակի թեմի հոգեւոր ընծայարանը:

1997-2003 թթ. ուսանել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանում:

2002 թ. դեկտեմբերի 24-ին՝Ս. Ստեփաննոս նախավկայի տոնին, ձեռամբ Տ. ՆԵրսես արքեպիսկոպոս Պոզապալյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2003 թ. Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ աշխատանքի է անցել կաթողիկոսարանում՝ որպես պարեկ:

2003 թ. հոկտեմբերի 30-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Հովհան Օձնեցու արմատական բարեփոխումները հայոց Ճաշոց-տոնացույցում» թեմայով:

2003 թ. նոյեմբերի 23-ին, ձեռամբ Տ. Դավիթ արքեպիսկոպոս Սահակյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

2004 թ. ուսանել է Գերմանիայի Արեւելյան եկեղեցիների ինստիտուտում՝ հետեւելով գերմաներենի դասընթացներին:

2006 թ. հունիսի 20-ից նշանակվել է Ամենայն Հայոց Կաթողիկոսի զավազանակիր:

2008 թ. դեկտեմբերի 20-ից նշանակվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արարողապետ՝ շարունակելով զավազանակրի պարտականությունը:

2010 թ. ապրիլի 15-ին պաշտպանել է վարդապետական թեզ «Թոնդրակեցիների կեղծ աղանդը» թեմայով:

2010 թ. ապրիլի 20-ին ստացել է վարդապետական մասնավոր չորս աստիճանները՝ ձեռամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ Տ. Արարատ

եպիսկոպոս Գալթակչյանի: Նույն փարում մեկնել է ԱՄՆ-ի Սան Կլաուդ քաղաքի Սուրբ Հովհաննես համալսարան՝ հետեւելով ասպվածաբանության դասընթացներին:

2010 թ. դեկտեմբերի 20-ին Նորին Սրբության բարձր տնօրինությամբ նշանակվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետի պաշտոնակատար:

2011 թ. սեպտեմբերի 7-ին Վեհափառ Հայրապետի բարձր տնօրինությամբ նշանակվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Այսու ուրախությամբ կ'ուզենք տեղեկացնել, որ փարույս նոյեմբեր 7-ին առաջնորդարանիս մէջ կազմակերպուեցաւ ընդունելութիւնը Գերմանիա գտնուող Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Վսեմաշուք նախագահ Տիար Բակօ Սահակեանի եւ Իր շքախումբին:

Սրբազան Հօր գրասենեակին մէջ կարճ ընդունելութիւնէն յետոյ յարգելի նախագահը ստորագրեց առաջնորդարանի պատուոյ տոմարը, ապա առաջնորդանիստ Ս. Սահակ Մեսրոպ եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ համայնքին հետ հանդիպում: Նախ խօսք առաւ առաջնորդ Գարեգին սրբազան բարի գալուստ մաղթելով յարգելի նախագահին եւ իր շքախումբին, ներկայացնելով Գերմանահայ թեմի ամփոփ պատմականը: Սրբազան Հօր ելոյթէն յետոյ Նախագահը ներկայացուց Արցախին իրավիճակը, խնդիրները եւ յաջողութիւնները, ինչպէս նաեւ պատասխանեց ներկաներու հարցումներուն: Յաւարտ երեկոյի համայնքի սրահին մէջ տեղի ունեցաւ ընդունելութիւն, ուր ժողովուրդը կարողացաւ անձամբ շփուիլ եւ խօսիլ յարգելի Նախագահին հետ:

ԴԻՒԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ
ՀԱՅՈՑ ԳԵՐՄԱՆԻՈՅ

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԼՍԱՐԱՆԻ ԲԱՑՈՒՄ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանը պատմության ընթացքում ձեռք է բերել հայ ազգի նշանավոր ուսումնական հաստատության համբավը, սակայն կրթական այս ամուր վեմն իրենից ներկայացնում է ոչ միայն դասավանդման կենտրոն, այլեւ ազգային գործունեության բարի հրապարակ: Ճեմարանը գիտակցական ծննդավայր է հանդիսացել բազում նվիր-

յալների, ովքեր իրենց հոգեւոր եւ աշխարհիկ ծառայությունն են մատուցել հայ ազգին, սակայն ճեմարանը հնարավորություն է տվել նաեւ ազգի նվիրյալներին իրենց գործերը ի ցույց դնելու այլ եղանակով: Նշվածի լավագույն օրինակներից մեկը հանդիսացավ 2011 թվականի նոյեմբեր 8-ին տեղ գտած իրադարձությունը. Սանկտ-Պետերբուրգի հայ համայնքի նախագահ Կարեն Մկրտչյանի բարերարությամբ ճեմարանում բացվեց համակարգչային լսարան, որը նպատակ ունի ճեմարանականների կրթական համակարգում ժամանակակից եւ դրական փոփոխություն մտցնելու:

Բարերարի ներդրումը գնահատելու եւ ճեմարանի տեսչությունը կազմակերպել էր համակարգչային լսարանի հանդիսավոր բացում, որի վերջակետը հանդիսացավ ճեմարանի երգչախմբի մատուցած համերգային ծրագիրը: Մաեստրո Շոթա Վարդանյանի ղեկավարությամբ երգչախումբը կատարեց մի շարք հոգեւոր եւ ազգային երգեր: Հարկ է նշել, որ հանդիսության ժամանակ ելույթ ունեցավ ճեմարանի քահանայից լսարանի ունկնդիր Հովհաննես Կարապետյանը, որ Դ լսարանի սան՝ Արթուր դպիր Վարդանյանի հետ կատարեց «Ծիրանի ծառ»-ը:

Հիշատակության արժանի է այն փաստը, որ ողջ հանդիսությանը ներկա էր Ռոմանովների ազնվական տոհմի իշխանուհի՝ Մարիա Վլադիմիրովնան: Վերջինիս ողջունեց մայրավանքի միաբան՝ Գերաշնորհ Տ. Նաթան եպիսկոպոս Հովհաննիսյանը, նշելով, որ ժամանակին հայ հոգեւորականությունը հնարավորություն չի ունեցել շփվելու ռուս ազնվականության հետ, սակայն անկախ Հայաստանն այսօր մատուցում է այդ հնարավորությունը: Սրբազանը ոգեւորությամբ նշեց, որ ուրախ է տեսնելու իշխանուհուն հանդիսականների շարքերում եւ հույս հայտնեց, որ վերջինիս հաճելի կլինի կազմակերպված արարողությունը:

Հանդիսության վերջում ելույթ ունեցավ նաեւ իշխանուհի Մարիա Վլադիմիրովնան եւ նշեց, որ երգչախմբի կատարումները ցնցեցին իրեն, եւ ինքը հիացմունքով գերազանց է գնահատում այդ կատարումները: Իր խոսքի վերջում իշխանուհին նշեց նաեւ, որ ճեմարանականի ընտրությունը բոլոր ժամանակներում աչքի է ընկնում իր դժվարությամբ, որի տակ թաքնված է ազգային նվիրումի գործոնը, եւ մաղթեց, որ ճեմարանականները հաջողեն իրենց ընտրության մեջ եւ դառնան ազգին արժանի հոգեւորականներ:

ԴԱՎԻԹ ՍԱՐԿԱՎԱԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

«ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՑԻՉ» ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Նոյեմբերի 9-ին, Էջմիածնի «Հրաչ եւ Սյուզան Թոփչյան» Հայորդյաց տան հանդիսությունների դահլիճում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ, եւ մասնակցությամբ ՀՀ Կրթության ու գիտության նախարար Արմեն Աշոտյանի, տեղի ունեցավ Մայր Աթոռի հովանու ներքո անցկացվող «Լավագույն ուսուցիչ» ամենամյա հանրապետական մրցույթի 2011 թ. հաղթողների մրցանակաբաշխության հանդիսությունը:

«Լավագույն ուսուցիչ» ամենամյա մրցույթը Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ ՀՀ Կրթության ու գիտության նախարարության համագործակցության շրջանակներում իրականացվում է 2004 թվականից սկսյալ՝ նպատակ ունենալով բացահայտել, խրախուսել եւ գնահատել մասնագիտական խորը գիտելիքներով, ստեղծագործական եւ դասավանդման հմուտ կարողություններով օժտված ուսուցիչներին: «Լավագույն ուսուցիչ» մրցույթը կազմակերպվում է հովանավորությամբ Մայր Աթոռի բարերարներ, ամերիկաբնակ քույրեր Սիլվա եւ Իրմա Տեր-Ստեփանյանների:

Մրցույթն անցկացվում է ՀՀ բոլոր մարզերում եւ Երեւան քաղաքում՝ մարզային եւ հանրապետական փուլերով, որի արդյունքներն ամփոփվում են հանդիսավոր մրցանակաբաշխության ընթացքում: Մրցույթին մասնակցում են «Հայոց Եկեղեցու պատմություն», «Հայոց պատմություն», «Հայոց լեզու եւ գրականություն» «Բնագիտություն» (ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն) առարկաների ուսուցիչներ, ինչպես նաեւ տարրական դպրոցների դասվարներ:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, ՀՀ ԿԳ նախարարության եւ Երեւանի քաղաքապետարանի կրթության վարչության ներկայացուցիչներ, Կրթության ազգային ինստիտուտի մասնագետներ, ուսուցիչներ Հայաստանի տարբեր մարզերից:

Հանդիսությունն սկսվեց Տերունական աղոթքով, որին հաջորդեց Մայր Աթոռի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Տ. Վարդան արեղա Նավասարդյանի ողջույնի խոսքը: Հայր սուրբը, բարի գալուստ մաղթելով կրթության մշակներին, անդրադարձավ ուսուցչի վեհ կերպարին ու առաքելությանը հայոց ազգային դպրոցի կյանքում:

Ապա ներկաները դիտեցին «Ծողակաթ» հեռուստաընկերության պատրաստած տեսաֆիլմը «Լավագույն ուսուցիչ» մրցանակաբաշխության եւ Մայր Աթոռի ու նախարարության միջեւ ձեւավորված սերտ համագործակցության մասին,

որից հետո մրցույթի մասին տեղեկություններ փոխանցեց ԿԳՆ հանրակրթության վարչության պետ Նարինե Հովհաննիսյանը:

Անուհետև ուսուցիչներին իր շնորհավորանքի խոսքն ուղղեց ՀՀ Կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը՝ անդրադառնալով նաեւ Հայ Եկեղեցու ազգախնամ առաքելությանը եւ նախարարության ու Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի միջեւ ծավալված համագործակցությանը: «Հայ ինքնության մեջ այնքան շաղախված է քրիստոնեական բարոյագիտությունը, մեր Եկեղեցին իր հերթին այնքան է շաղախված ազգային նկարագրով եւ առանձնահատկություններով, որ զատել հային քրիստոնյա հայից, զատել աշխարհիկ կամ հավատացյալ հային շատ դժվար է, որովհետեւ արմատների միահյուսվածությունն այսօր մեզ թույլ է տալիս իրականում առանց վախենալու եւ տրտնջալու հնարավոր քննադատությունների եւ այլակարծության առջեւ հերթական անգամ փաստել՝ Եկեղեցին ունի բացառիկ առաքելություն մեր կյանքում, Եկեղեցին ունի բացառիկ առաքելություն հոգեւոր-մշակութային արժեքների պահպանման հարցում, Եկեղեցին ունի բացառիկ առաքելություն հայի կերպարը, արժեհամակարգը փայփայելու հարցում նաեւ հետագայում: Սա է մեզ տալիս վստահություն, սա է մեզ տալիս իրավական եւ բարոյական հիմք՝ հերթական անգամ հյուրընկալվելու Մայր Աթոռում եւ հերթական անգամ փաստելու, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը Կրթության եւ գիտության նախարարության կարեւորագույն գործընկերներից մեկն է ապագա հայի կերտման ու դաստիարակման գործում», - իր խոսքում նշեց կրթության եւ գիտության նախարարը՝ շնորհավորելով նաեւ Նորին Սրբությանը գահակալության 12-րդ տարեդարձի եւ ծննդյան 60-ամյակի առիթով:

Մրցանակաբաշխության առիթով իր ջերմ զգացողություններն արտահայտեց «Լավագույն ուսուցիչ» մրցույթի հովանավոր Սիլվա Տեր-Ստեփանյանը՝ հաջողություններ մաղթելով հայ ուսուցչին հայապահպան իր կարեւոր առաքելության մեջ եւ վստահեցնելով, որ Մայր Աթոռի բարերարները պիտի շարունակեն ըստ ամենայնի զորավիգ լինել Վեհափառ Հայրապետին ազգանպաստ եւ եկեղեցաշեն բոլոր ձեռնարկների իրագործման համար:

Այնուհետև Նորին Սրբությունը եւ ՀՀ ԿԳ նախարար Արմեն Աշոտյանը մրցույթի հաղթողներին հանձնեցին մրցույթի մասնակցության վկայականներ, դրամական պարգեւներ եւ հոգեւոր գրականություն:

Առաջին մրցանակի արժանացան «Հայոց լեզվու եւ գրականություն» առարկայի ուսուցչուհի Էմմա Հովհաննիսյանը (Կոտայքի մարզի Զովունիի միջնակարգ դպրոց), «Ֆիզիկա» առարկայի ուսուցիչ Ռոբերտ Ավանեսյանը (Վաղարշապատի Գրիգոր Նարեկացու անվան թիվ 2 միջնակարգ դպրոց) եւ Եղեգնաձորի թիվ 2 հիմնական դպրոցի դասավար Ռուզաննա Ասլանյանը: Երկրորդ մրցանակ ստացան 9, իսկ երրորդ մրցանակ՝ 15 ուսուցիչներ:

Հայոց ուսուցչի մեծարման գեղեցիկ այս արարողության ընթացքում հոգեւոր

երգերի կատարմամբ ելույթ ունեցավ միջազգային մրցույթների դափնեկիր «Սպեղանի» աղջիկների երգչախումբը՝ ղեկավարությամբ եւ խմբավարությամբ Սարինե Ավթանդիլյանի:

Հանդիսության ավարտին ամենքին իր օրհնությունն ու պատգամը բերեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Իր խոսքում Նորին Սրբությունն արձանագրեց, որ ուսուցիչներ եւ հոգեւորականներ տերունապատվեր նույն առաքելությունն են իրականացնում, ազգի արժանավոր զավակներ կրթում: «Գիտելիքից զատ ուսուցչի, ինչպես նաեւ եկեղեցականներիս, առաջին պարտականությունն է, որպեսզի մեր զավակներին առաջորդենք դեպի Աստված: Այդ է նպատակը մեր առաքելության, այդ է նպատակը մեր կյանքի, լինելության: Լինել Աստծո հետ եւ ջանք գործադրել, որպեսզի մեր նմանին նույնպես ուղղորդենք, առաջնորդենք դեպի Աստված, որովհետեւ Աստծո հետ է ուրախությունը, երջանկությունը, Աստծո հետ է, որ կյանքը դառնում է բարի, գեղեցիկ եւ սիրով առլեցուն: Աստծո հետ մարդը վերագտնում է իր նմանությունը Աստծուն եւ ապրում է արարչագործական, ստեղծագործական կյանքով: Մենք բոլորս կրթում ենք երեխաներին, որպեսզի նրանք օժտված լինեն գիտելիքներով, իրենց հոգում կրեն սերն առ հայրենին, սերն առ մեր ազգային արժեքները, մեր լեզուն ու մշակույթը եւ սերն առ Աստված: Իսկ առ Աստված սերը, մենք բոլորս գիտենք, որ սկսվում է մեր նմանին սիրելուց, Աստծո արարչագործությունը սիրելուց», - նշեց Վեհափառ Հայրապետը՝ մաղթելով, որ ուսուցիչների ջանքերը կատարյալ արդյունավորում ունենան, եւ դաստիարակվեն ազգի այնպիսի զավակներ, որոնց կյանքը եւ ընթացքը աստվածահաճո լինի, մեր ժողովրդին բարօրություն, մեր երկրին առաջընթաց ու զորություն ապահովեն:

Այս առիթով Նորին Սրբությունը գնահատանքի իր խոսքը հայտնեց Կրթության եւ գիտության նախարարությանը՝ ի դեմս նախարար Արմեն Աշոտյանի, եւ մրցույթի բոլոր կազմակերպիչներին: Նորին Սրբությունը իր օրհնությունը բերեց նաեւ բարերարներին, ովքեր, գնահատելով մանկավարժի գործը, հանձնառությամբ եւ սիրով ցանկանում են մասնակցություն բերել ավանդական դարձած այս միջոցառման իրականացմանը: Ամենայն Հայոց Հայրապետը, վերստին շնորհավորելով մանկավարժներին, մաղթեց, որ այս մրցույթը նոր ոգեւորություն եւ եռանդ պարգեւի յուրաքանչյուրին՝ առավել նվիրումով ու սիրով իր ծառայությունը բերելու երեխաների կրթության-դաստիարակության գործին, մեր Հայրենիքի շենացմանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀՈԳԵՒՈՐ ԶՐՈՒՅՑ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Գեւորգյան հոգեւոր ճեմարանն իր էությամբ ուսումնական հաստատություն է, սակայն բացի զուտ տեսանելի կառույցը այն պարունակում է նաեւ աներեւույթ կապեր եւ խարիսխներ, որոնք դրոշմվում են յուրաքանչյուրի սրտում, ով որեւէ առնչություն է ունենում այս հաստատության հետ: Այդ անտեսանելի երեւույթներին են պատկանում մի շարք հատկանիշներ եւ կարողություններ, որոնք բնորոշ են հայ բարեպաշտ անհատին եւ հատկապես հոգեւորականին: Ճեմարանի կամարներից ներս մտնողը չի կապվում ճեմարանին որոշակի ժամանակով, այլ մշտամնա փոխհարաբերության մեջ է մտնում հոգեւոր կրթօջախի հետ եւ հնարավոր առիթ ընձեռվելու դեպքում ի ցույց է դնում իր սերն ու նվիրումը: Վերոնշյալի վառ ապացույց հանդիսացավ 2011 թ. նոյեմբեր 11-ի իրադարձությունը. հոգեւոր ճեմարան ժամանել էր հաստատության նախկին տեսուչ՝ գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Մաշալյանը: Սրբազան հոր այցը մասամբ կարոտից դրդված քայլ էր, սակայն իր խորքում այցը կրում էր դաստիարակչական բնույթ, քանզի սրբազանը ցանկանում էր խոսել ճեմարանականների հետ հոգեւորականի կոչման հիմնահարցի շուրջ:

Սրբազանը նախ նշեց, որ հոգեւորականի ուղու ընտրությունը բխում է բազմապիսի պատճառներից եւ հանգամանքներից, բայց ամենից առաջ ընտրությունը կայանում է Աստծո անձայն կանչին դրական պատասխանելու մեջ: Այնուհետեւ սրբազանը նշեց, որ հոգեւորականի կայացման ճանապարհը, որի մասն է կազմում ճեմարանը, դյուրին եւ անհոգ մի ընթացք չէ, այլ կրակներով լեցուն մի դարբնոց, որտեղ կիզիչ կրակի մեջ հղկվում եւ թրծվում են հայ ապագա հոգեւորականները:

Զրույցի ընթացքում սաները հնարավորություն ստացան հարցադրումներ կատարել, որոնց շնորհիվ պարզաբանվում էին շատ խնդիրներ:

Նմանատիպ այցելությունները դրական ազդեցություն են ունենում ուսանողների վրա, քանզի մատչելի եւ օգտակար քարոզին զուգահեռ նրանք տեսնում են ճեմարանին նվիրված հոգեւորականներ:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Շահեն Հովսեփյանի անունը ճեմարանականներին քաջ ծանոթ է, եւ նրանք տեղյակ են, որ վերջինս զանազան ուսումնասիրություններով եւ հետազոտություններով մանրազնին կերպով զբաղվում է հայ մշակույթի եւ պատմության հարցերով: Իր ուսումնասիրությունների վերջնակետը նպատակ ունի վերհանելու այնպիսի հարցեր եւ իրադրություններ, որտեղ ոտնահարվում կամ էլ մոռացության են մատնվում հայ մշակույթի կոթողները: Բարեբախտաբար իր ուսում-

նասիրությունների արդյունքին տեղեկանալու հնարավորություն ունենում են նաեւ ճեմարանականները: 2011 թվականի նոյեմբեր 11-ին Շահեն Հովսեփյանը կրկին հյուրընկալվում էր Գեւորգյան հոգեւոր ճեմարանում, այս անգամ իր մատուցած նյութը կրում էր «Մշակութային եղեռն» խորագիրը:

Համառոտ, սակայն մատչելի կերպով հարգարժան դասախոսը ներկայացրեց, թե մշակութային ինչ վայրագություններ են կատարվել ներկայիս Թուրքիայի տարածքում 1915 թվականից վեր:

Դասախոսության մեջ հարգարժան Տիար Հովսեփյանը նշեց, որ թուրքական կառավարությունը մշտապես վախեցել է, որ մի օր սրիպված կլինի պատմականորեն հայերին պատկանող հողերը վերադարձնել իրական տերերին, եւ այդ հարցից խույս տալու նպատակով որոշել է ոչնչացնել հայ ժողովրդի հետքը Արեւմտյան Հայաստանի տարածքից: Այս բարբարոսության արդյունքում տուժել են հայ մշակույթին պատկանող բազում եկեղեցիներ, վանական համալիրներ, խաչքարեր, կամուրջներ եւ այլ նշանավոր կոթողներ: Ամենայն մանրամասնությամբ պատմվեց ու ներկայացվեց ավելի քան 90 կառույցների կենսագրություն, որոնք հիմնահատակ ոչնչացվել կամ աներեւակայելի կերպով այլափոխվել են՝ կորցնելով իրենց հորինվածքում հայկական շունչը: Տիար Հովսեփյանը նշեց նաեւ, որ թուրքերն ավելի մեղմ են վարվել այն կառույցների հետ, որոնք եկամուտ են բերում՝ հանդիսանալով զբոսաշրջության կիզակետ, սակայն այս կառույցների պահպանման կողքին նրանցում առկա յուրաքանչյուր տարր, որ հայկական է, դաժան կերպով ջնջվում է:

Նշվեց, որ պատմական հայկական կառույցները վերանորոգվում են եւ հետագայում ներկայացվում են իբրեւ թուրքական մշակույթի տարր: Բերվեց նաեւ օրինակ, թե ինչպես են թուրքերը հայկական հնամենի եկեղեցիները օգտագործում իբրեւ շինանյութի պահեստ կամ էլ մարզադահլիճ: Ընդհանուր հաշվարկով 1915 թվականից մինչ մեր օրերը թուրքերի կոմից վնասվել կամ ոչնչացվել է ավելի քան 2000 հայկական եկեղեցի:

Վերջում մեծարգո Շահեն Հովսեփյանը շեշտեց, որ ազգային այդ արժեքների պահպանման միակ միջոցը մնում է համամարդկային տեղեկատվությունը, որով ամբողջ աշխարհին պիտի տեղեկացվի, թե ինչպես են կործանվում հայ մշակույթի կառույցները:

Դասախոսության ավարտին Շահեն Հովսեփյանին շնորհակալական խոսք ասաց ճեմարանի ուսումնական գծով փոխտեսուչ՝ հոգեշնորհ Տ. Անդրեաս աբեղա Եգեկյանը: Հայր Սուրբը նշեց, որ նմանատիպ դասախոսությունները մեծ կարեւորություն ունեն ճեմարանականների համար, քանի որ նրանք տեղեկանում են իրենց ազգի արժեք հանիդսացող կառույցների պատմությանը եւ դա դառնում է յուրահատուկ գրավական եւ վստահություն, որ ապագայում այդ հոգեւորականները ամեն ջանք ու աշխատանք կներդնեն ի պաշտպանություն այդ կոթողների:

ԴԱՎԻԹ ՍԱՐԿԱՎԱԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

«ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱԳՐՔԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՐՎԱ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնը նախաձեռնել էր «Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի դասագրքերի բրայլյան տարբերակի վերածման եւ հրատարակման ծրագիր, որի իրականացումը ստանձնել էր Հայաստանի Աստվածաշնչային ընկերությունը:

Նոյեմբերի 14-ին Երեւանի տեսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոցում տեղի ունեցավ կույրերի միաջազգային օրվան նվիրված միջոցառում, որի ընթացքում ներկայացվեց «Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի 5-րդ դասարանի դասագրքի բրայլյան տարբերակը:

Միջոցառման ընթացքում մասնակիցներին ողջունեց եւ Վեհափառ Հայրապետի օրհնությունը փոխանցեց Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Գերաշնորհ Տ. Գեւորգ եպիսկոպոս Սարոյանը, որ նաեւ Հայաստանի աստվածաշնչային ընկերության հոգաբարձուների խորհրդի նախագահն է: Սրբազան Հայրը բարձր գնահատեց կազմակերպիչների նախաձեռնությունը՝ շեշտելով վերջինիս հրատապությունը հասարակության հատուկ ուշադրության կարիք ունեցող հատվածի համար:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի, ՀՀ Կրթության եւ գիտության նախարարության եւ Հայաստանի Աստվածաշնչային ընկերության ներկայացուցիչներ:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է շարունակել «Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի մնացյալ դասարանների դասագրքերի հրատարակությունը բրայլյան տարբերակով:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԲՈՍԼԻՆԵԱՆ ԵՐԿՈՒ ՄԱՆՐԱՆԿԱՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

«Այս թանկագին պարտէզը փրկած եմ գերութենէ, այս բուրումնաւէտ մրգապտանը, այս ջինջ ու փայլող գիրքը ի յիշատակ ինձ եւ ծնողներուս, կնոջս եւ զաւակներուս: Օրհնեալ է ան, որ զաւակ մը ունի ի Սիոն»
(Երուսաղէմի մատենադարանի ձեռագիր թիւ 142):

Երեքշաբթի, 15 նոյեմբեր 2011-ին աննախընթաց միջոցառում մը կազմակերպուեցաւ Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Մայրավանքի պատրիարքարանէն ներս Ամենապատիւ սրբազան պատրիարք Տ. Թորգոմ արքեպ. Մանուկեանի, Սրբոց Յակոբեանց միաբանութեան անդամներու եւ հայ համայնքէն հրաւիրեալներու ներկայութեան:

Այս հանդիսութեան առիթը զարդանկար երկու մագաղաթեայ ձեռագիր թերթերու յանձնումն էր, որոնք ժամանակին կը պատկանէին Հայոց Պատրիարքութեան ամենաթանկարժէք ձեռագիրներու հաւաքածոյին մէկուն: Յիշեալ այդ ձեռագիրը այն Աւետարանն է, որ պատուիրուած էր Կեռան թագուհիին կողմէ իր ամուսնոյն եւ Կիլիկիոյ Հայոց ապագայ թագաւոր Լեւոն Բ./Գ.-ի համար: Ձեռագիրն ընդօրինակուած է Աւետիս դպիրի կողմէ մայրաքաղաք Սիսի մէջ 1272 թուին եւ զարդանկարուած Կիլիկեան դարաշրջանի նշանաւոր արուեստագէտ Թորոս Ռոսլինի կողմէ 1256-1272 ժամանակամիջոցին:

Երկու մանրանկարները, որոնք իրենց տունը վերադարձուեցան՝ կը ներկայացնեն Սուրբ Մարկոս աւետարանիչը (էջ115) եւ Համբարձումը (էջ 284)՝ որոնք անօրինաբար փրցուած էին ձեռագիր մատեանէն մօտ հարիւր տարիներ առաջ: Մինչեւ վերջերս յիշեալ երկու թերթերը մաս կը կազմէին Icons and East Christian Works of Art հաւաքածոյին, որ կը պատկանէր հոլանտացի հնահաւաք պարոն Միքայէլ Վան Ռիյնին: Այժմու սեփականատէրը պարոն Թանասիս Մարթինոս՝ որ յոյն միջնորդի մը միջոցաւ ամբողջ հաւաքածոն 1989-ին գնած էր պարոն Միքայէլ Վան Ռիյնէն՝ այս տարուան մայիսին Լոնտոնի Սոթըպիզի մասնագէտ պարոն Տիմոթէոս Պոլթընի թելադրութեան վրայ կապի մէջ մտաւ Բրիտանական մատենադարանի (նախկին Բրիտանական թանգարան) Միջին Արեւելքի բաժնի պատասխանատու՝ Արժանապատիւ Տէր Ներսէս (Վրէժ) քահանայ Ներսէսեանի հետ այս երկու մանրանկարներու ծագման մասին իր մասնագիտական կարծիքը առնելու համար: Հարցը քննարկելէ եւ անհրաժեշտ ապացոյցները ստանալէ ետք թէ ատոնք անօրինաբար վերցուած էին Կեռան թագուհիի աւետարաններու մատեանէն՝ պարոն Թանասիս Մարթինոս ազնուօրէն համաձայնեցաւ մանրանկարները վերադարձնել որպէս նուէր Երուսաղէմի Հայոց պատրիարքութեան:

Հայոց պատրիարքէն ստացած լիազօրութեամբ՝ Արժանապատիւ Տ. Ներսէս քահանայ Ներսէսեան հեշտացուց երկու թերթերու վերադարձը եւ Երու-



Սուրբ Մարկոս ավետարանիչ

Սուրբ Համբարձում

սաղէմ հրաւիրուեցաւ զանոնք յանձնելու պատրիարքարանին, ուր նախապէս ապոնք մաս կը կազմէին թիւ 2653 ձեռագիր մագաղաթին:

Տէր Ներսէս իր խօսքին մէջ վերբերաւ այս պատեհութեան ոգին եւ էութիւնը եւ ընդգծեց այս մագաղաթին կարեւորութիւնը հայ մշակոյթին մէջ, Կեռան թագուհիի աւետարաններուն պատմութիւնը եւ վերջապէս փոխանցեց երկու թերթերուն պահպանութիւնը Նորին Ամենապատիւ պատրիարք Տ. Թորգոմ արքեպ. Մանուկեանին, Ս. Աթոռոյ լուսարարապետ Գերաշնորհ Տ. Նուրհան արքեպ. Մանուկեանին եւ լուսարար Տ. Բարսեղ վրդ. Գալէմքէրեանին, որոնք ստացութեան փաստաթուղթը ստորագրեցին: Այսպիսով մէկ դարու բացակայութենէ մը ետք Կեռան թագուհիի աւետարաններէն պակսող երկու թերթերը իրենց հարազատ տունը վերադարձան:

Հանդիսութեան յայտագրի բացումը կատարեց Հոգեշնորհ Սամուէլ ծ. վրդ. Աղոյեան՝ ներկայացնելով Տ. Ներսէս քահանայ Ներսէսեանի կենսագրական գծերը:

Իր սիրոյ աշխատանքին եւ երկու թերթերու վերադարձին իր նուիրեալ հետապնդման համար՝ Ամեն. պատրիարք սրբազան Հայրը եւ լուսարարապետ Նուրհան արքեպ. Մանուկեան միասնաբար լանջախաչով զարդարեցին Տ. Ներսէս քահանայի կուրծքը ի դիմաց Սրբոց Յակոբեանց միաբանութեան:

Հանդիսութիւնը փակուեցաւ Ս. Աթոռի օրհներգով, որուն յաջորդեց հիւրասիրութիւն մը:

ԵՐՈՒՍԱՂԷՄ
ԴԻՒԱՆ Ս. ԱԹՈՌՈՅ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՏԻԱՐ ԲԱԿՕ ՍԱՀԱԿԵԱՆԵԻ ԱՐՑԱԽԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐՇ. Տ. ՊԱՐԳԵՒ ԱՐՔ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԱՅՑԵԼԵՑԻՆ

Հինգշաբթի նոյեմբեր 17-ի կէսօրը Ամերիկայի Հայոց Արեւելեան թեմի առաջնորդարանը այցելեցին Արցախի Հանրապետութեան նախագահ Տիար Բակօ Սահակեան եւ Արցախի Հայոց թեմի առաջնորդ Գերշ. Տ. Պարգեւ արք. Մարտիրոսեան: Անոնք Միացեալ Նահանգներ կը գտնուէին մասնակցելու համար ի նպաստ Արցախի Հանրապետութեան զարգացման նոյեմբեր 24-ին հեռասփռուելիք տարեկան «թելեթոն»ին:

Հայրենի պաշտօնական հիւրերուն կ'ընկերակցէին Հայաստանի Հանրապետութեան ԱՄՆ-ի մնայուն եւ արտակարգ դեսպան տիար Թաթուլ Մարգա-

րեան, Հայաստանի Հանրապետութեան ՄԱԿ-ի մօտ մնայուն եւ լիազօր դեսպան տիար Կարէն Նազարեան, Արցախի Հանրապետութեան ԱՄՆ-ի ներկայացուցիչ տիար Ռապրրթ Անեփիսեան եւ այլ պաշտօնական անձնաւորութիւններ:

Ամերիկայի Հայոց Արեւելեան թեմի առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արք. Պարսամեան, իր շուրջը ունենալով առաջնորդի փոխանորդ Հոգշ. Տ. Սիմէոն աբղ. Օփապաշեան, թեմական խորհուրդի ատենապետ տիար Ասկըր Թադոսեան, թեմական խորհուրդի անդամ տոքթ. Ռաֆֆի Յովհաննէսեան եւ Հայ օգնութեան ֆոնտի վարիչ տնօրէն տիար Գառնիկ Նանակիլեան, դիմաւորեց հայրենի պատուիրակութիւնը եւ զանոնք առաջնորդեց Ս. Վարդան Մայր Տաճար, ուր մատուցուած աղօթքէն ետք՝ հիւրերը բարձրացան առաջնորդարանի դահլիճը եւ հիւրասիրուեցան կէսօրուան ճաշով:

Ճաշի աղօթքէն ետք առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արք. Պարսամեան բարի գալուստ մաղթեց Արցախի նախագահին, Արցախի Հայոց թեմի առաջնորդին եւ բոլոր ներկաներուն՝ շեշտելով որ առաջնորդարանը եւ Հայ օգնութեան ֆոնտը մարդասիրական ինչպիսի օժանդակութիւն կը ցուցաբերեն անկախացած Արցախին եւ խոստացաւ որ այդ աշխատանքը պիտի շարունակուի: Խօսելով ամերիկահայ երիտասարդներու Արցախ այցելութեան դպաւորութեանց մասին՝ ըսաւ որ այս այցելութիւնները մեծապէս ազդած են անոնց հոգեկան աշխարհին վրայ, մանաւանդ անկախութեան դիրանալու համար Արցախի ժողովուրդին կատարած քաջարի պայքարը: Ապա՝ կենաց առաջարկեց Արցախի Հանրապետութեան նախագահին, Գերշ. Տ. Պարգեւ արք. Մարտիրոսեանին եւ արցախաբնակ հայրենակիցներու բարօրութեան եւ յաջողութեան համար:

Նախագահ Բակօ Սահակեան իր խօսքին մէջ մեծապէս գնահատեց առաջնորդ սրբազան Հօր առաջնորդութեամբ մատուցուած օժանդակութիւնները Հայաստանի եւ Արցախի հանրապետութիւններուն: Ըսաւ որ սրբազան Հօր ջանքերով զոյգ հանրապետութիւններու հանդէպ ստեղծուած է յարգանքի, սիրոյ եւ գործակցութեան մթնոլորտը: Արտայայտուեցաւ այն դերին մասին որ արտասահմանը կրնայ ունենալ Արցախի տնտեսական եւ զարգացման մարզերուն մէջ եւ գնահատանքով արտայայտուեցաւ Համահայկական հիմնադրամի օժանդակութեանց մասին:

Խօսքի աւարտին՝ նախագահ տիար Բակօ Սահակեան առաջնորդ սրբազան Հօր յանձնեց «Արցախի Յուշամեդալը» ի գնահատութիւն Արցախի հանդէպ անոր ցոյց տուած մօտիկ հետաքրքրութեան եւ քահանայական ձեռնադրութեան 40-ամեակին առիթով:

Այս հանդիպումի ընթացքին ելոյթ ունեցան նաեւ Արցախի Հայոց թեմի առաջնորդ Գերշ. Տ. Պարգեւ արք. Մարտիրոսեան, Հայաստանի Հանրապետութեան ԱՄՆ-ի լիազօր եւ արտակարգ դեսպան տիար Թաթուլ Մարգարեան, Հայաստանի Հանրապետութեան ՄԱԿ-ի մօտ լիազօր եւ մնայուն դեսպան

փիար Կարէն Նազարեան, եւ Հայ օգնութեան ֆոնտի վարիչ տնօրէն փիար Գառնիկ Նանակիլեան:

Յաւարտ ճաշկերոյթին՝ հայրենի պաշտօնական հիւրերը հրաժեշտ առին առաջնորդ սրբազան Հօրմէ եւ առաջնորդարանի ներկայացուցիչներէն:

ԴԻՒԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳՐՈՎ ԱՒԵՏԻՍ ՔՀՆ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆԻՆ ՇՆՈՐՀՈՒԵՑ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԼԱՆՋԱԽԱՉ ԿՐԵԼՈՒ ԻՐԱՒՈՒՆՔ

Նոյեմբերի 20-ին Սիդնէյի Ս. Յարութիւն առաջնորդանիստ եկեղեցում, յընթացս Ս. Պատարագի, ձեռամբ Աւստրալիայի եւ Նոր Զելանդիայի Հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Աղան արքեպիսկոպոս Պալիոզեանի, Քահանայական լանջախաչ շնորհուեց եկեղեցու հոգեւոր հովիւ՝ արժանապատիւ Տ. Աւետիս քհն. Համբարձումեանին:

Ս. Պատարագի ընթացքում Տ. Պարթեւ քհն. Գարագաշեանը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից շնորհուած Օրհնութեան Գիրը հանդիսաւորապէս բարձրացրեց Ս. Խորան, եւ Տ. Նորայր աւագ քհն. Բաթանեանն ընթերցեց, որում մասնաւորաբար ասում էր.

«Սիրելի տէր Հայր,

Համայն հայութեան հոգեւոր նուիրական կենտրոն սրբութիւն սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքները:

Ի գնահատութիւն Ձեր արդիւնաւոր ծառայութեան եւ սիրով ընդառաջ Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի Հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Աղան արքեպիսկոպոս Պալիոզեանի խնդրանքին, Հայրապետական Օրհնութեան այսու Գրով շնորհում ենք Ձեզ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԼԱՆՋԱԽԱՉ կրելու իրաւունք...»:

Այնուհետեւ թեմի բարեխնամ առաջնորդ Գերաշնորհ Տ. Աղան արք. Պալիոզեանը պահպանիչ աղօթքով լանջախաչը յանձնեց Տ. Աւետիս քահանային՝ շնորհաւորելով եւ մաղթելով նախանձախնդիր եւ արդիւնաբեր հոգեւոր ծառայութիւն:

ԱՒՍՏՐԱԼԻԱՅԻ ԵՒ ՆՈՐ ԶԵԼԱՆԴԻԱՅԻ ԹԵՄ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ

Նոյեմբերի 23-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Եւրոպական ժողովրդական կուսակցության պատվիրակությունը՝ ուղեկցությամբ ՀՀ Կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանի:

Վեհափառ Հայրապետը գոհունակություն հայտնեց Հայաստանի կուսակցությունների՝ ԵԺԿ-ին անդամագրվելու գործընթացի սկզբնավորման առիթով: Նորին Սրբությունը նշեց, որ քրիստոնեական հավատի եւ բարոյականության վրա խարսխված մեր եւ եւրոպական արժեքների նույնությունն ավելի դյուրին պիտի դարձնի Հայաստանի կուսակցությունների եւ ԵԺԿ-ի միջեւ նախանշվող համագործակցության իրականացումը:

Ապա ԵԺԿ փոխնախագահ, Եւրախորհրդարանի պատգամավոր Քորիան Ուորթման-Կուլը պատվիրակության անդամների անունից շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության համար՝ անդրադառնալով պատվիրակության փաստահավաք առաքելությանը: Իր խոսքում նա կարեւորությամբ ընդգծեց նաեւ, որ քրիստոնեական արժեքները ԵԺԿ-ի հիմքն են կազմում:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պատմական առաքելությանը, եկեղեցական կյանքի ներկայիս վերակազմակերպման աշխատանքներին, ինչպես նաեւ միջեկեղեցական հարաբերություններին, միջկրոնական երկխոսության մեջ Հայ Եկեղեցու մասնակցությանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ